



Organization for Security and  
Co-operation in Europe  
Office in Yerevan



«Հմտություններ և մեխանիզմներ կանանց քաղաքական առաջխաղացման համար» ծրագիր



**Կանանց քաղաքական գործունեության  
առանձնահատկությունները ՀՀ-ում և  
քաղաքական կուսակցություններում կանանց  
ներգրավման և հավասար հնարավորությունների  
ապահովման մեխանիզմ**

## Բովանդակություն

<b>1. Հետազոտության մեթոդաբանությունը.....</b>	<b>3</b>
<b>2. Կանայք քաղաքականության մեջ. կին- գործիչների ընկալումները .....</b>	<b>5</b>
2.1. Կին-գործիչների կողմից քաղաքական իրենց դիրքի ստանձնման ընկալումը .....	5
2.2. Կին-գործիչների կողմից քաղաքական ոլորտում ներգրավվելը որպես նպատակ.....	6
2.3. Կին-գործիչների քաղաքական կենսագրության մեկնարկը.....	7
2.4. Կին-գործիչների ռեֆերենտ խումբը, ինքնանույնականացումը .....	7
2.5. Խորհրդատվություն ընտանիքում քաղաքական ոլորտ ներգրավվելուց առաջ .....	8
2.6. Կին-գործիչների գործունեության դժվարությունները .....	9
2.7. Գործունեության մեջ կանանց առավելությունները տղամարդկանց նկատմամբ՝ ըստ կին-գործիչների .....	16
2.8. Ինչի՞ց են գրկվել կին-գործիչներն իրենց գործունեության արդյունքում .....	17
<b>3. Հարցվողների գենդերային կարծրատիպերը .....</b>	<b>19</b>
3.1. Կին-գործիչների կողմից կին և տղամարդ գործիչների առջև դրվող ընդհանուր պահանջները.....	19
3.2. Կին և տղամարդ քաղաքական, պետական գործիչների կերպարները՝ ըստ կին-գործիչների .....	19
3.3. Կանանց և տղամարդկանց կողմից դեկավարման ենթակա ոլորտները՝ ըստ կին-գործիչների .....	22
3.4. Կանանց և տղամարդկանց կողմից գրադեցման ենթակա դիրքերը՝ ըստ կին-գործիչների .....	23
3.5. Կին-գործիչների գենդերային նախապատվություններն աշխատանքում .....	24
3.6. Նախադեպը որպես գենդերային խտրականության նվազեցման գործոն .....	26
<b>4. Քաղաքական ոլորտում կանանց ներգրավվածության առանձնահատկությունները</b>	<b>27</b>
4.1. Քաղաքական ոլորտում կանանց ցածր ներկայացվածության պատճառները .....	27
4.2. Կանայք ԱԺ-ում և ավագանիում. քվոտաների համակարգը .....	29
<b>5. Կին-գործիչների գործունեության առանձնահատկությունները կուսակցության ներքում .....</b>	<b>34</b>
5.1. Մասնակցությունը կուսակցական աշխատանքներին.....	34
5.2. Ազդեցությունն իրենց անդամակցած քաղաքական միավորների որոշումների կայացման վրա .....	35
<b>6. Կուսակցությունների գենդերային քաղաքականությունը և PR-ը .....</b>	<b>37</b>
6.1. Կուսակցությունների գենդերային քաղաքականությունը.....	37
6.2. Կուսակցությունների գենդերային PR քաղաքականությունը .....	44

7. <u>Քաղաքական կուսակցություններում կանանց ներգրավման և հավասար հնարավորությունների ապահովման մեխանիզմ</u> .....	56
8. <u>Գնահատման մեխանիզմներ</u> .....	64

## 1. Հետազոտության մեթոդաբանությունը

### Հետազոտության հիմնական նպատակները

Սոցիոլոգիական հետազոտությունն իրականացվել է

- ԱԺ-ում ներկայացված մի շարք կուսակցությունների ներկայացուցիչ կանանց շրջանում, որոնք ակտիվ դեր ունեն քաղաքական դաշտում և տարբեր դիրքեր զբաղեցնում,
- ԱԺ-ում ներկայացված նույն այդ կուսակցությունների PR պատասխանատուների շրջանում (որոնք բոլորը տղամարդիկ են եղել):

Նպատակը եղել է՝ բացահայտել

- քաղաքական դաշտում ակտիվ դերակատարություն ունեցող կանանց **գենդերային հիմնախնդիրները՝** խոչընդոտները, անհրաժեշտ ռեսուրսները և այլն,
- քաղաքական դաշտում ակտիվ դերակատարություն ունեցող կանանց **գենդերային կարծրատիպերն ու վարքի մոդելները,**
- կուսակցությունների **գենդերային քաղաքականությունը,**
- կուսակցությունների **գենդերային PR քաղաքականությունը:**

### Հետազոտության մեթոդները

- **Խորին հարցազրույցներ** քաղաքական ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող կին-գործիչների հետ (*այս կատեգորիայի հարցվողները վերլուծության մեջ կնշվեն որպես «կին-գործիչներ»*):
- **Խորին հարցազրույցներ** կուսակցության PR մասնագետների/պատասխանատուների հետ (*այս կատեգորիայի հարցվողները վերլուծության մեջ կնշվեն որպես «PR պատասխանատուներ»*):

### Հետազոտության ընտրանքը

Հետազոտության մեջ ներառվել են ԱԺ-ում ներկայացված հետևյալ կուսակցությունները.

- «Հայաստանի հանրապետական կուսակցություն»
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն
- «Օրինաց երկիր» կուսակցություն
- «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն
- «Ժառանգություն» կուսակցություն
- «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն
- «Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն»

Այս կուսակցություններից ընտրվել են

- մեկական կին-գործիչ,
- PR մասնագետ/պատասխանատու:

Կին-գործիչներն ընտրվել են այնպես, որ հնարավորինս ներկայացված լինեն ամենատարբեր ստատուսները/դիրքերը և լայնորեն ընդգրկեն գործունեության տարբեր հարթություններն ու ասպարեզները:

Պահպանելու համար հարցման անանունության սկզբունքը և հաշվի առնելով հարցվողների՝ չբացահայտված մնալու ցանկությունը՝ հաշվետվության մեջ չի նշվելու որևէ հարցվողի անուն (ո՛չ կանանց, ո՛չ տղամարդկանց):

Ավելին՝ քանի որ ՀՀ-ում կին-գործիչները բավականին քիչ են և նրանց իդենտիֆիկացնելը չափազանց հեշտ է, կանանց ընտրանքը կտրվի միմիայն՝ ըստ նրանց զբաղեցրած դիրքերի, սակայն չի նշվի, թե որ դիրքերի կրողը որ կուսակցության ներկայացուցիչն է, քանի որ կուսակցական պատկանելության նշումն ուղղակիորեն կմատնանշի տվյալ անձի ինքնությունը:

**Այսպիսով՝**  
**Կին-գործիչների ընդհանուր բնութագիրը**

N	Ընտրանքում ներառված կին-գործիչների զբաղեցրած դիրքերը	Տարիքը
1	ԱԺ պատգամավոր, կուս. հանձնաժողովներից մեկի նախագահ	մինչ 45
2	Կուս. վարչության անդամ, հանձնաժողովներից մեկի անդամ, Երևանի ավագանու թեկնածու	45-ից ավելի
3	Կուս. վարչության անդամ, Հանրային խորհրդի անդամ, պատգամավորության համամասնական թեկնածու	45-ից ավելի
4	Կուս. վարչության անդամ, նախարարի խորհրդական, պատգամավորության համամասնական թեկնածու	45-ից ավելի
5	Կուսակցապետ, ԱԺ պատգամավոր	45-ից ավելի
6	Կուս. անդամ, կուս. կանանց խորհրդի հանձնաժողովի ղեկավար, ԱԺ համամասնական պատգամավոր, ԱԺ հանձնախմբերից մեկի ղեկավար	
7	Կուս. անդամ, պատգամավորության համամասնական թեկնածու	մինչ 45

**Ընտրանքի առանձնահատկությունները**

1. Հարցվողների քաղաքական դիրքորոշումը բնութագրելու համար հիմք է ընդունվել տվյալ կուսակցության այս պահի ինքնահռչակումը, որի համաձայն՝
  - **իշխանամետ են** ՀՀԿ-ն և ՕԵԿ-ը,
  - **ո՛չ իշխանություն, ո՛չ ընդդիմություն է** ԲՀԿ-ն (այն իրեն հռչակել է «այլընտրանք»),
  - **ընդդիմադիր են** ԺԿ-ն, ՀԱԿ-ը, ՄԴՀԿ-ն և ՀՅԴ-ն:
2. Քանի որ քաղաքական ենթակառուցվածքները հիմնականում կենտրոնացած են Երևանում, բոլոր հարցվողները, բացառությամբ մեկ հոգու, ներկայումս բնակվում են Երևանում:
3. Քանի որ հարցման մասնակիցները պետական, քաղաքական գործունեություն ծավալող անձինք են, նրանք բոլորն ունեն բարձրագույն կրթություն:
4. ՄԴՀԿ-ն չի ունեցել PR պատասխանատու, ուստի «PR մասնագետ/պատասխանատու» կատեգորիայի ներկայացուցիչ հարցման չի ենթարկվել այդ կուսակցությունից:

5. ՀՀԿ-ի PR պատասխանատուից չի հաջողվել հարցմանը մասնակցելու համաձայնություն ստանալ, ուստի «PR մասնագետ/պատասխանատու» կատեգորիայի ներկայացուցիչ հարցման չի ենթարկվել այս կուսակցությունից:
6. Համարյա բոլոր կուսակցություններում PR պատասխանատուները եղել են տղամարդիկ: Արդյունքում «PR մասնագետ/պատասխանատու» կատեգորիայում հարցման է ենթարկվել 1 կին և 4 տղամարդ (սա ուշադրության արժանի գործոն է, և որոշ հանգամանքներ է բացատրում կուսակցությունների գենդերային քաղաքականության և PR-ի հարցում):

**Այսպիսով հարցման է ենթարկվել 7 կին-գործիչ, 5 PR պատասխանատու/մասնագետ:**

## 2. Կանայք քաղաքականության մեջ. կին-գործիչների ընկալումները

### 2.1. *Կին-գործիչների կողմից քաղաքական իրենց դիրքի (վարչության անդամ, պատգամավոր, կուսակցապետ և այլն) ստանձնման ընկալումը*

Հարցումները ցույց են տալիս, որ ընտանեկան տարբեր կարգավիճակ ունեցող կանայք տարբեր ընկալումներ ունենա սեփական քաղաքական ակտիվության վերաբերյալ:

1. **Զամուսնացած կանայք** իրենց կողմից քաղաքական ակտիվություն ծավալելու պատճառ են համարում **սեփական կամքը**, հմտությունները, նպատակասլացությունը և որոշ արտաքին հանգամանքներ:

Սակայն միևնույն ժամանակ ոմանք որոշակի կապ են տեսնում իրենց քաղաքական ակտիվության և չամուսնացած լինելու միջև՝ նշելով, որ հավանաբար տվյալ զբաղվածությունն ու աշխատանքով տարվածությունն են պատճառը, որ չեն հասցրել ընտանիք կազմել և երեխա ունենալ:

*Մի քանի հնարավորություն բաց թողեցի ընտանիք կազմելու, բավականին լավ: Բայց ես չեմ ափսոսում: Պատճառը զբաղվածությունն էր, որովհետև ես համարյա ամեն ամիս, որ սումկաս հանում էի պահարանից ու սկսում էի իրերս դնել, մամաս ասում էր. «Էլի գնում ե՛ս»: Ես լավ գիտակցում էի, որ եթե ընտանիք ունենամ, չեմ կարող, իսկ դա (ակտիվությունը) ինձ շատ հետաքրքիր էր և գայթակղիչ:*

2. **Ամուսնացած կանայք** սովորաբար իրենց խոսքը սկսում է **ամուսնուն ուղղված երախտագիտությամբ**, որը «թույլ է տվել» կամ «ըմբռնումով է մոտեցել» իրենց քաղաքական ակտիվությանը: Այսինքն՝ ինքնըստինքյան սպասելի են դիտում ամուսնու կողմից իրենց ակտիվության խաչընդոտումը, և դրա բացակայությունն ընկալում են որպես բացառություն կամ «նվեր», որն արժանի է երախտագիտության:

Այնուամենայնիվ և՛ ամուսնացած, և՛ չամուսնացած կանայք պնդում են, որ ամուսնու անհամաձայնության դեպքում ի վիճակի կլինեին կոտրել այն և համոզել՝ ընդունելու իրենց իրավունքներն ու նպատակները:

*Ես կհամոզեի իմ կողակցին, որ՝ եթե դու ինձ ուզում ես տեսնել ինքնաբավ, ռեալիզացված (պիտի թույլ տաս)... Որովհետև ամեն մարդ ունի իրա ռեալիզացիայի շրջանակը. մեկինը փոքր ա, մեկինը մի քիչ ավելի մեծ ա, մեկինը մի քիչ շատ ավելի մեծ ա: Եթե դու չես ռեալիզացվում, ներվերի կծիկ ես, ավելի վատն ես, քան կարող ես լինել:*

3. **Ամուսնալուծված կանայք** շեշտում են, որ տվյալ ակտիվությունը «չի ներվել» ամուսինների կողմից, որոնք արդյունքում ամուսնալուծվել են:

Այս բոլոր դեպքերում կանայք չեն ընկրկել ընտանեկան ճնշումներից (եթե այդպիսիք եղել են), իսկ ընտրություն կատարելու առջև կանգնելու դեպքում ընտրել են սեփական



նպատակները և գործունեությունը՝ ի հակադրություն ընտանիք ունենալու հնարավորության կամ այն կորցնելու հավանականության:

Հետաքրքրականն այն է, որ քաղաքական գործունեությամբ զբաղվելու հարցը կանանց կողմից ինքնաբերաբար կապվում է սեփական ընտանեկան կարգավիճակի հետ և պտտվում հենց ընտանիքի առանցքի շուրջ՝ մատնանշելով, որ այն կա՛մ ընդունվում է ամուսնու/ապագա ամուսնու կողմից, կա՛մ կանգնեցնում երկրնտրանքի առջև. կորցնել ընտանիքը/ապագա ընտանիքը և զբաղվել քաղաքականությամբ կամ հակառակը՝ հրաժարվել/կրճատել գործունեությունը և պահպանել/ունենալ ընտանիք: Իսկ սա թույլ է տալիս ենթադրել, որ կանայք չեն կարող առանց ամուսնու համաձայնության և՛ քաղաքական գործունեությամբ զբաղվել, և՛ ընտանիք ունենալ:

## 2.2. *Կին-գործիչների կողմից քաղաքական ոլորտում ներգրավվելը որպես նպատակ*

**Բոլոր հարցվողներն** առավել երիտասարդ տարիքում չեն պատկերացրել իրենց քաղաքական ոլորտում, և բացատրում են իրենց ներգրավումն առավելապես իրենց կամքից անկախ հանգամանքներով՝ այլոց առաջարկությամբ, քաղաքական հանգամանքների որոշակի դասավորությամբ, հասարակական նորաբուխ գործընթացներում ներգրավվելով և այլն, որոնք նախապես կանխատեսել չէին կարող:

*Երբ ես սկսեցի զբաղվել հասարակական գործունեությամբ, քաղաքական դաշտ մտնելու նպատակներ կամ ձգտումներ չկային: Սակայն աստիճանաբար իրերի դասավորվածությամբ, հանգամանքների բերումով մտա քաղաքական դաշտ:*

Այսինքն՝ քաղաքական ակտիվությունը հիմնականում բխում է տվյալ անձի համար իրավիճակային, հաճախ՝ **անկանխատեսելի հանգամանքների** համընկնումներից: Եվ քանի որ տվյալ անձինք չեն պատկերացնում, որ բազմաթիվ հանգամանքների նպաստավոր համընկնումը կարող է պատահել իրենց հետ, **վաղօրոք չեն մտածում քաղաքական գործունեություն ծավալելու կամ դրան նպատակամղված հասնելու մասին:**

Սակայն միևնույն ժամանակ հարցումները ցույց են տալիս, որ հարցված կանայք բավականին վաղ տարիքից **գիտակցել են իրենց որպես փոփոխությունների ունակ սուբյեկտներ, որոշակի առաքելություն ունեցող անհատներ**, որոնք ի վիճակի են կամ պարտավոր են ներդրում ունենալ պետության կայացման կամ զարգացման հարցում:

*Երազանքներիս մեջ եղել ա, որ մեր հանրապետությունը լինի լավագույններից, որ ես ունենամ իմ դերը, քանի որ բոլորս հենց էնպես չենք գալիս աշխարհ, պիտի ունենանք մեր լուսման սերունդներիս թողնելու:*

*Ուզում էի նպաստել, որ օրենսդրական փոփոխություններ լինեն առնվազն... Կամ գոնե քո քննադատությամբ կամ լուսաբանելով,*

*տարածելով որևէ արարք, որևէ անօրինակություն, կարող ես խոչընդոտես անօրինական գործողություններին:*

Հատկանշական է, որ հարցված բոլոր կանայք, որոնք եղել են համամասնական կարգով պատգամավորության կամ ավագանու թեկնածու, **առաջադրվելու հարցում որևէ նախաձեռնողականություն չեն ցուցաբերել**. ցուցակում ընդգրկվելու առաջարկը նրանց եկել է «վերնից»՝ կուսակցության ղեկավարի կամ վարչության կողմից, ինչը նրանք ընդունել են:

*Երբ ժամանակը եկավ, և ինձ կանչեց իմ ղեկավարությունը և ասաց, որ ինձ առաջարկում է որպես պատգամավոր, դա ինձ համար մեծ հպարտություն էր, և ես յիարկե համաձայնվեցի՝ շատ անհանգստանալով, որովհետև համարում եմ, որ պատգամավորը ամենամեծ պատասխանատվություն կրող անձն է այսօր հասարակության մեջ:*

Որևէ մեկը ինքնառաջարկով հանդես չի եկել: Մա հավելյալ գործոն է, որը թույլ է տալիս ենթադրել, որ **քաղաքական դաշտում առաջ գնալու, որոշակի ֆորմալ դիրք զբաղեցնելու հարցում կանանց դիրքորոշումը բավականին պասիվ է, նախաձեռնողականությունը՝ բավականին ցածր:**

### **2.3. Կին-գործիչների քաղաքական կենսագրության մեկնարկը**

Հարցված կանանց հասարակական-քաղաքական ակտիվությունն ունի հիմնականում 2 տիպի մեկնարկ.

1. **45 տարեկանից բարձր կանանց խմբում** մեծ մասը ԽՍՀՄ ժամանակաշրջանում ներգրավվել է կոմունիստական կուսակցության մեջ և արել կուսակցական կարիերա. անկախությունից հետո դուրս է եկել և կա՛մ կարճ, կա՛մ երկար ժամանակ անց ներգրավվել է որևէ այլ կուսակցության մեջ:
2. **Մինչև 45 տարեկան հարցվողների խմբում** բոլորն անկախության տարիներին ներգրավվել են որևէ կուսակցության մեջ:

Մա ցույց է տալիս, որ բոլոր կանայք իրենց քաղաքական կարիերան սկսել են երիտասարդ տարիքում և մեծ մասը նպատակ են ունեցել կուսակցական աստիճանակարգությամբ վեր բարձրանալու:

Մինչև 45 տարեկան կանանց խմբում այն ընթանում է առավել սահուն և միազիժ: Իսկ 45 տարեկանից բարձր կանանց խմբում քաղաքական կարիերան ընդհատվել է ՀՀ անկախության ստեղծումով և քաղաքական կոնյունկտուրայի փոփոխությամբ, սակայն վերջիններս, ինչպես ցույց են տալիս հարցումները, **չեն հրաժարվել քաղաքական ոլորտում կրկին ներգրավվելու նպատակից** և որոշ ժամանակ անց վերադարձել են՝ հարմարվելով քաղաքական նոր պայմաններին:

### **2.4. Կին-գործիչների ռեֆերենտ խումբը, ինքնանույնականացումը**

Կանանց **ինքնանույնականացման** հարցում նկատվում են հետևյալ առանձնահատկությունները:

Կանանց մոտավորապես կեսի պարագայում, ում մայրերը տնային տնտեսուհիներ են կամ զբաղեց (րել)նում են ոչ բարձր դիրքեր, ձգտման կերպար է (եղել) **հարազատ հայրը**:

*Ես անձամբ շնորհակալ եմ իմ ծնողներից, հատկապես իմ հայրիկից, որը ինձ անկաշկանդ է մեծացրել, որը ամեն հնարավորություն տվել է, որ ես ինձ դրսևորեմ: Ինձ չեն ճնշել որպես մարդ և նույնիսկ խրախուսել են, որ ես բոլորի հետ բանավեճի մեջ մտնեմ, մասնակցել եմ բոլոր կարգի քննարկումներին, ինչ մեր տանը եղել է, ինչ հայրիկիս շրջապատում եղել է: Ամեն տեղ հայրիկիս հետ գնում էի, դրա համար ես կոմպլեքսներ չունեմ տղամարդկանց նկատմամբ. միշտ եղել եմ շրջապատված տղամարդկանցով, տղա ընկերներով, և իմ մոտ շփումը տղամարդկանց հետ շատ անկաշկանդ է: Ես երբեք չեմ կոմպլեքսավորվում ոչ իշխանության մեջ գտնվող բարձրաստիճան մարդկանց մոտ, ոչ իմ ընկերների մոտ: Դա իմ մանկության ձեռքբերումն է, որը առ այսօր ինձ օգնում է:*

Բոլոր կանայք նշում են, որ իրենց ծնողական ընտանիքում երեխաներին կամ անձամբ իրենց ընձեռնված է եղել ազատություն, որոշումների կայացման ինքնուրույնություն, հարգանք դեպի իրենց կարծիքը և այլն, ինչը հարցված կանայք կարևագույն գործոն են համարում ապագայում իրենց քաղաքական և աշխատանքային հաջողությունների հարցում, քանի որ **հոր հետ ինքնանույնականացումը** որոշակի **նախնական ռեսուրսի** է վերածվել, ինչը թույլ է տվել հասարակության կողմից կնոջ համար անընդունելի համարվող դիրքերին ձգտելու հարցում դրսևորել որոշակի **հաստատականություն**:

*Իմ դաստիարակության մեջ կա ազատ որոշում կայացնելու էդ կարևորագույն գործոնը, մեր ընտանիքում մեր ծնողները երբեք չեն կաշկանդել մեզ որոշումներ կայացնելու հարցում: Այ հենց էդ ինքնուրույնությունը, որոշում կայացնելու այ էդ իմ ծնողներիցս շնորհված հնարավորությունը ես պահեցի իմ ամբողջ կյանքում: Պահեցի նաև իմ (ամուսնական) ընտանիքում, և երբեք ինձ որևէ մեկը չի կարողանում կաշկանդել այդ հարցում, մեր ընտանիքում չի եղել նման խոսակցություն. որոշումը ես կայացրել եմ, և նա (ամուսինը) ընդունել է դա:*

Այս հանգամանքը թույլ է տալիս պնդել, որ ազատ դաստիարակությունն ու գենդերային խտրականության բացակայությունն ընտանիքում կարևոր կապիտալ և խթանիչ ուժ է դառնում կանանց կողմից հասարակական-քաղաքական կամ այլ գործունեություն ծավալելու «համարձակության» համար:

**2.5. Խորհրդատվություն ընտանիքում քաղաքական ոլորտ ներգրավվելուց առաջ**

Այս հարցում կարելի է տարանջատել կանանց ըստ ընտանեկան կարգավիճակի:

1. **Չամուսնացած կանանց** (որոնք սկսել են հասարակական-քաղաքական առաջընթացի ձգտել դեռ ծնողների ընտանիքում եղած ժամանակ) մեծամասնության դեպքում **հայրերը** եղել են **կողմ, մայրերը՝ դեմ:**

Մայրերի **անհամաձայնության հիմքում** հիմնականում ընկած են եղել հետևյալ պատճառաբանությունները.

- հետ պահել դստերը ծանրաբեռնվածությունից (նրա կյանքը տեսնել թեթև),
- հետ պահել դստեր երեխաներին «սթրեսից ու դժբախտ մանկությունից»,
- հետ պահել դստերը հնարավոր «անամուսին» ապագային (այս պատճառաբանության հիմքում ընկած է մայրերի այն համոզմունքը, որ նման գործունեություն և ծանրաբեռնվածություն ունեցող կանայք կամ իրենք չեն հասցնում ամուսնանալ, կամ տղամարդիկ չեն ցանկանում նմանների հետ ամուսնանալ):

2. **Ամուսնացած կանանց** մի մասի ամուսինները եղել են **կողմ** կամ **առնվազն չեն խոչընդոտել:**

*Խորհրդակցել եմ ամուսնուս հետ: Եվ կարող եմ ասել, որ այն ամենին, ինչին հասել եմ և հասնում եմ իմ կյանքում, նաև իմ ամուսնու շնորհիվ է, որովհետև իմ ամուսինը իմ լրջագույն աջակիցն է:*

Որոշ կանայք նշում են նաև, որ սկզբնական շրջանում որոշ խոչընդոտների բախվել են, քանի որ ամուսինների համար անսովոր և անսպասելի է եղել նրանց քաղաքական գործունեությունը, սակայն կարողացել հարթել դա և փոխհամաձայնության գալ:

Ամուսնացած կանանց մյուս մասի ամուսիններն **ամուսնալուծվել** են, քանի որ չեն հարմարվել սեփական կանանց հավակնություններին և զբաղվածությանը:

Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ կանանց հիմնականում սատարում են՝

1. ծնողների ընտանիքում՝ **հայրը,**
2. ամուսնու ընտանիքում՝ **ամուսինը:**

*Իմ ընտանիքը վառ օրինակ է շատ հավասար իրավունքների և հարգանքի միմյանց հանդեպ. ամուսինս միշտ ինձ աջակցել է, աջակցում է նաև հիմա, ինչպես և ես իրեն, իր դժվար մասնագիտության մեջ: Նա միշտ ուրախությամբ հետևում է իմ հաջողություններին, ես էլ՝ նրա:*

Հաշվի առնելով, որ հարցված կանայք զբաղվում են իրենց նախընտրած գործունեությամբ, կարող ենք եզրակացնել, որ ծնողների ընտանիքում **որոշիչը հոր դիրքորոշումն** է, քանի որ հոր կողմից է եղել **համաձայնությունը** և մոր կողմից՝ **անհամաձայնությունը**<sup>1</sup>:

<sup>1</sup> Ինչը թույլ է տալիս նաև ենթադրել, որ դստեր՝ իր ցանկացած գործունեությամբ զբաղվելու հանդեպ հոր արգելքը նույնպես կարող է որոշիչ լինել և դառնալ նրա առաջընթացի առարկայական խոչընդոտ:

Քանի որ հարցվածների մեջ չկան կանայք, որոնց ամուսինները դեմ են նրանց գործունեությանը, իսկ իրենք շարունակում են զբաղվել այդ գործունեությամբ, կարելի է եզրակացնել, որ ամուսնու անհամաձայնությանը չենթարկվելը հիմնականում հանգեցնում է ամուսնալուծության:

Այսինքն՝ տղամարդու և կնոջ դիրքորոշումները հիմնականում ունեն տարբեր կշիռներ.

1. առաջինը հիմնականում ունի «դատավճռի» կարգավիճակ. մանավանդ եթե դիրքորոշումն արգելող է, չենթարկվելուն հետևում է «պատիժը»՝ ամուսնալուծությունը,
2. երկրորդը սովորաբար ունի կարծիքի կարգավիճակ:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, սակայն, որ հարցված կանայք հիմնականում կայացրել են սեփական որոշումը և այնուհետև տեղյակ են պահել ընտանիքի անդամների:

*Դու քո ներքում արդեն ամեն ինչ որոշել ես. էդ խորհրդակցելը համարյա թե տեղյակ պահելուն հավասարագոր է: Ինձ շատ հատուկ է ինքնուրույն որոշումներ կայացնելը*

## **2.6. Կին-գործիչների գործունեության դժվարությունները**

### Ընտանեկան/բարեկամական հարթությունում

Քաղաքական և նաև առհասարակ աշխատանքային գործունեության հարցում կանայք բախվում են մի շարք դժվարությունների, որոնք տարբերվում են՝ կախված նրանց ընտանեկան կարգավիճակից և քաղաքական դիրքորոշումից:

- **Ընդդիմադիր դիրքորոշում ունեցող կուսակցությունների անդամ կանայք** բախվում են հետևյալ դժվարություններին:  
Նրանց շրջապատը երբեմն բացասական կամ «հետ քաշող» վերաբերմունք ունի նրանց քաղաքական գործունեության հանդեպ՝ համարելով այն ոչ միայն տվյալ կնոջը, այլև հենց իրենց (շրջապատի) գոյությունն ու գործունեությունը վտանգող երևույթ: Այս կանանց հարազատները կամ ընկերները վստահ են, որ չունենալով իրենց շրջապատում ընդդիմադիր դիրքորոշմամբ ակտիվ գործիչ՝ առավել մեծ ձեռքբերումների կարող են հասնել իրենց կարիերայում կամ գոնե առավել անվտանգ կյանք ապրել, քանի որ որևէ պետական հաստատություն կամ կառույց, որոնց հետ առնչվում են գործի բերումով, չի կարողանա իրենց խարազանել ընդդիմադիր հարազատ ունենալու համար և այդ պատճառաբանությամբ զրկել ինչ-ինչ ծառայություններից կամ արտոնություններից:

Սակայն սա բոլորին չէ բնորոշ: Կան կին-գործիչներ, որոնք հավաստում են, որ իրենց բարեկամական/ընտանեկան շրջապատի կողմից արժանանում են հանդուրժողական վերաբերմունքի, թեպետ իրենց ընդդիմադիր կեցվածքի

հետևանքով ենթարկվում են ադմինիստրատիվ և այլ ճնշումների պետական ապարատի կողմից:

*Իմ ամբողջ ազգում բոլորն էլ գիտեն, որ ես այդպիսին եմ, ու որևէ մեկը դրա համար ինձ չի հանդիմանել, չի կշտամբել: Ես իմ գործունեությանը նույնիսկ վնաս եմ տվել իմ եղբայրներին, նրանց աշխատանքից ազատել են, աշխատանք չունեին երկար տարիներ, ստիպված արտագաղթեցին: Բայց երբեք եղբայրներս ինձ չեն ասել՝ «դու քո պայքարով փաստորեն վնաս ես պատճառում»: Ընդունել են ինձ այնպիսին, ինչպիսին կամ:*

- **Իշխանամետ դիրքորոշում ունեցող կուսակցությունների անդամ կանանց** շրջապատը մեծամասամբ դրական է գնահատում նրանց քաղաքական գործունեությունը, քանի որ տվյալ կանայք ոչ միայն չեն վնասում իրենց շրջապատի մարդկան, այլև կարողանում օգտակար լինել իրենց քաղաքական խողովակների միջոցով:

Հարկ է շեշտել, որ շրջապատի այս դիրքորոշումները (և՛ ընդդիմադիրների, և՛ իշխանամետների դեպքում) **չի կրում գենդերային բնույթ**, այլ բացառապես կապված է իրենց հարազատը հանդիսացող կին-գործչի **քաղաքական դիրքորոշման** հետ:

- **Ամուսնացած կանանց** դեպքում հիմնական դժվարությունը ընտանեկան գործառույթների և արտաընտանեկան գործունեության համատեղումն է: Բանն այն է, որ, ըստ հարցվողների, կանանց ընտանեկան պարտականություններն առավել ժամանակատար են, քան տղամարդկանցը, ուստի դրանք պատշաճ կատարելու համար ծախսվում է զգալի ժամանակ: Հետաքրքրական է, որ հիմնականում կանանց կողմից զբաղվածությունը չի հանգեցնում կենցաղային պարտականությունների վերաբաշխման ամուսինների միջև և **կանայք կրում են «կրկնակի ծանրաբեռնվածություն»:**

*Կանայք, էդ (աշխատանքային) բեռի հետ զուգահեռ, տանում են ընտանեկան բեռը, որը իրականում ոչ ոք չի կարող խլել, և որը ամենամեծ բեռն է՝ և՛ հոգեբանական, և՛ ֆիզիկական, և՛ տնտեսական: Բոլոր առումներով դա կնոջ վրա է: Ես համարում եմ, որ կինը կրկնակի բեռի տակ է ընկնում:*

Այս դժվարություններից զերծ են **չամուսնացած/ամուսնալուծված կանայք**, որոնք չունեն հոգեբանական լարվածություն՝ ընտանեկան պարտականությունները վատ կատարելու դեպքում ընտանիքի դժգոհությանը բախվելու առումով: Սակայն մյուս կողմից երբեմն ենթարկվում են շրջապատի ճնշմանը, քանի որ վերջիններս պնդում են, որ **քաղաքական-հասարակական ակտիվության արդյունքում** են նրանք զրկվել «անձնական կյանքը դասավորելու» հնարավորությունից և **դարձել «տանը մնացած»:** Որոշ դեպքերում տվյալ կանայք արժանանում են շրջապատի հանդիմանությունը իրենց «առաջնային կոչումը»

(ամուսնանալն ու երեխա ունենալը) անտեսելու և, ըստ շրջապատի, դրանք ստորադասելու միջոցով քաղաքական-հասարակական ակտիվություն ցուցաբերելու համար:

Աշխատանքային հարթությունում (կուսակցության ներսում)

Համարյա բոլոր կին-հացվողների, **հատկապես 45-ից բարձր տարիքային խմբի շրջանում** նկատվում է մի դիրքորոշում, որի համաձայն, չնայած կանանց և տղամարդկանց հավասար լինելու պնդումներին, կինն աշխատանքային (կուսակցական և այլ) փոխհարաբերություններում այնուամենայնիվ պետք է իրեն առավել **«չխառնվող» և «հավասար»** պահի, եթե նույնիսկ տղամարդկանց նկատմամբ դեկավար դիրք է զբաղեցնում:

*Ես երբեմն առաջությունը թողնում եմ տղամարդկանց, որովհետև, ի տարբերություն մյուս խմբակցությունների, մեր խմբակցությունում ամեն մեկը արտահայտված անհատականություն է, և երբ կան խնդիրներ, որոնք իրենք պիտի բարձրաձայնեն, ես էդ դեպքում կարող եմ նաև զիջել դա իրենց: Երբ ինչ-որ մեկը բացակա է և ինչ-որ պակաս է առաջանում, միանշանակ ես անցնում եմ ակտիվ դերակատարության:*

Որոշ կանայք նշում են, որ, օրինակ, քաղաքական վեճերի ժամանակ (որի մասնակիցների մեծամասնությունը տղամարդիկ են) սովորաբար չեն հայտնում իրենց կարծիքը,

- քանի որ վեճերի դեպքում **տղամարդիկ առավել դժվարությամբ են ականջ դնում կանանց և առհասարակ թույլ տալիս նրանց խոսել,**

*Դա բարեկրթության պակաս է, որ գոյություն ունի քաղաքական գործիչների մեջ և ոչ միայն Հայաստանում: Եվ եթե դու փորձում ես պահպանել նաև քո կին տեսակը, այ էդտեղ արդեն պրոբլեմը շատ արտահայտված է լինում, որովհետև դու երբեմն ստիպված ես էդ կին տեսակից դուրս գալու և պարտադրելու, որ լռեն և քեզ լսեն: Դժվար է տղամարդկանց ձայնը ստիպել կտրել և սեփական կարծիքը արտահայտել:*

- այնուամենայնիվ **տղամարդկանց տեսակետներն ու տեսակետ հայտնելու նրանց իրավունքն առավել բարձր են դասում սեփականից:**

*Երբեմն լինում է, որ ինքդ քո մեջ որոշում ես կայացնում չխառնվել էդ խոսակցությանը, ինչքան էլ ասենք դու կարող ես ասել մի բան, որը ավելի ընդունելի կլինի տվյալ հարցի քննարկման համար, քան բանավիճողների կողմից առաջ քաշվածն է: Մտածում ես՝ դե տղամարդ են, խոսքը տղամարդունն է, թող խոսի, հա: Կա էդպես ներքին ինչ-որ գսպող բան, որ դու պակաս ակտիվությամբ խառնվես այդ քննարկումներին, որին ավելի ակտիվ խառնվում են տղամարդիկ:*

Հատկանշանակ է, որ նույնիսկ կուսակցապես կամ այլ ղեկավար-կանայք նշում են, որ, ի տարբերություն տղամարդկանց, չեն ձգտում ընդգծել իրենց ղեկավար դիրքը, այլ, ճիշտ հակառակը, **փորձում են «հավասարների հարաբերություն» հաստատել իրենց ենթակաների հետ**, հաշվի առնելով, որ նրանք տղամարդ են, իսկ **տղամարդկանց համար հոգեբանորեն ծանր է կին-ղեկավար ունենայք**, մանավանդ, երբ այդ տղամարդիկ իրենք ղեկավար են եղել կամ են: Ուստի ղեկավար մնալու, տղամարդկանց շրջանում ընդունելություն գտնելու, ինչպես նաև հնարավոր դժգոհությունները չեզոքացնելու համար տվյալ կանայք

- **«գիջողական»**,
- **արժանապատվությունը «շոյոդ»**

տակտիկաներ են կիրառում տղամարդկանց նկատմամբ: Օրինակ՝ խոսքը գիջում են նրանց, չեն նստում ղեկավարի աթոռին, ընդգծված հետաքրքրվում են նրանց կարծիքով, խոսում են մեղմ ձայնով և այլն:

*Դու պիտի կարողանաս քո կին հանգամանքը ճիշտ օգտագործել. ճկունությունը, նրբանկատությունը, երբեմն՝ զիջելու հատկությունը... թեկուզ կամքը պնդել, բայց ժպիտով՝ հիշեցնելով, որ դու կին ես և իրենք էլ պիտի քեզ զիջեն: Ես աշխատել եմ էնպես անել, որ իրենց Ես-ը միշտ արտահայտված լինի, իրենք իրենց նսեմացված չզգան, էնպես եմ պահել ինձ, որ հիշեն, որ ես կին եմ, այսինքն՝ իրենց կարևորությունը առաջնային եմ համարել: Եթե ամբիցիաներ են ունեվել և մեծարվելու կարիք, մեծարել եմ՝ արժանի են եղել:*

*Ոչ մեկն էլ պահանջկոտ, խստապահանջ կին-ղեկավարից չի սիրում անընդհատ ստանալ դիտողություններ, հանձնարարություններ: Բնականաբար հնարավոր ա, որ ինչ-որ տեղ էլ դժգոհություններ լինի: Բայց փորձել եմ միշտ հարթել, տղաների հետ ունենալ զուտ բարիդրացիական հարաբերություններ: Գիտե՞ք ինչ, հատկապես կուսակցական աշխատանքը, որ հասարակական ա, որ դու չես վճարում իրենց, իրենք գալիս են, քանի որ էդ գաղափարախոսությանը կողմնակից են կամ ինչ-ինչ նկատառումներից ելնելով, դու վերցնես ճզմես, սեղմես, պահանջես, չի լինի: Պիտի հասնես քո ասածին՝ հենց ելնելով էդ համոզելու մեթոդից:*

*Շատ դեպքերում տղամարդկանց հետ հանգիստ տոնայնությամբ, ժպիտով խոսքը շատ ավելի մեծ ազդեցություն է թողնում, և ես իմ օրինակով կարող եմ ասել, որ դա հենց այդպես է:*

Հարցվողներից ոմանք նշում են նաև, որ ներկուսակցական փոխհարաբերություններում առկա է **տղամարդկանց միջև հարցերի լուծման ձևավորված համակարգ, որը բացառապես «տղամարդկային» մի զինանոց է**, որը կանանց հետ հարցեր լուծելու համար պիտանի չէ, քանի որ տղամարդիկ չեն կարող այդ զինանոցը կիրառել կանանց նկատմամբ, իսկ կանայք իրենց հերթին չեն տիրապետում այդ գործիքներին:



Այսինքն՝ կանայք կարող են որոշակի ազդեցություն ունենալ կուսակցության գործունեության դետալների շտկման, փոփոխման հարցում, սակայն հիմնականում **դուրս են մնում կուսակցային օրակարգերի ձևավորումից**, առավել մեծ հարցերի լուծումներից, քանի որ այդ հարթություններում խառնվելու, համամասնակից դառնալու համար **ստիպված են դիմել «տղամարդկային» զինանոցին** և դրսևորել վարքագծի այն կանոնները, որոնք ընդունելի չեն համարվում կանանց համար. օրինակ՝ *առաջնորդություն, ամբիջիաներ, համառություն, կոպտություն և այլն*, այսինքն՝ **«տղամարդանալ»**, ինչը բացասաբար է ընդունվում և՛ տղամարդկանց, և՛ կանանց կողմից:

Հարցված կանանց մի մասը, հատկապես նրանք, ովքեր առավել բարձր դիրք են զբաղեցնում կուսակցության մեջ, ընդգծում են, որ **տղամարդկանց միջավայրում ոչ միայն ղեկավար դիրք ստանձնելը, այլև այն հետազայում պահպանելը մեծ ջանքեր է պահանջում**, քանի որ ենթակա տղամարդիկ, այնուամենայնիվ, այնքան էլ *չեն հաշտվում կին-ղեկավարի գոյության հետ*:

*Ես չեի ասի, որ դա հարթվել է, առ այսօր էլ դա դեռ խոչընդոտ է: Վերջին 5-6 տարիների ընթացքում մենք ունեցանք նաև կուսակցական ընկերներ, որոնք ժամանակին շատ լուրջ պաշտոններ են զբաղեցրել և նրանց համար լինել իմ առաջնորդության ներքո շատ դժվար է: Ես հասկանում եմ նրանց. լուրջ պաշտոններ զբաղեցրած մարդկանց համար կնոջ ղեկավարության տակ աշխատելը էնքան էլ սովորական չի: Նրանցից ամեն մեկը մտածում էր՝ «իսկ ինչու՞ ոչ ես»:*

Հասարակական հարթությունում

Կին-գործիչները նշում են, որ հասարակական հարթությունում իրենց հիմնական դժվարությունը հայ հասարակության՝ մեծամասամբ ավանդական աշխարհայացքն է, որը **թերահավատ և ոչ այնքան արդարացնող վերաբերմունք ունի կին-գործիչ նկատմամբ**: Բացի այդ՝ որոշ չափով շոկային է ընդունում կանանց կողմից քաղաքական հարցերի քննարկումը, ինչը տղամարդկանց դեպքում լիովին բնական է համարում:

*Երբ-որ տղամարդը խոսում ա, շատ նորմալ ա ընդունվում՝ բա ո՞նց, բա պիտի խոսա: Բայց որ դու ես խոսում՝ յա՛, խոսում ա՛ :*

Եթե տղամարդ-գործիչները խնդիր չունեն ապացուցելու սեփական վալիդությունը որպես քաղաքական-հասարակական կամ այլ գործիչ, ապա **կանայք նաև ստիպված են վաստակել այդ «իրավունքը» հասարակության աչքում**: Ուստի կանայք որպես գործիչ սեփական **պիտանելիությունն ապացուցելու տևական գործընթաց են անցնում**:

*Հաղորդման հյուր էի, պատգամավորության թեկնածու էի: Եվ դահլիճից մի երիտասարդ... ինչն ինձ համար բավականին զարմանալի էր, որովհետև ինձ թվաց, որ երիտասարդներն ավելի առաջադեմ են լինում... վեր կացավ, ասեց. «Գիտե՞ք, Դուք շատ երկար դատողություններ*

*արեցիք, բայց թողեք մեր գործը մենք անենք, իսկ Ղուք ավելի լավ ա խոհանոցում Ձեր գործն անեք»:*

Բացի այդ՝ ըստ կին-գործիչների՝ հասարակությունն առավել **խստապահանջ** է կին-գործիչի նկատմամբ և առավել **քննադատաբար** է մոտենում նրա գործունեության թերացումներին:

*«Կանայք պետք է ավելի պատասխանատու լինեն, որովհետև կանանց սխալը չի ներվում: Եթե տղամարդը ինչ-որ սխալ է անում՝ «դե նորմալ է, դե տղամարդ է, դե էդպես էլ կարող է լինել»: Բայց երբ կինն է անում՝ «հայ կինը չէր կարող էդպիսի բան թույլ տալ», «հայ կինն իրավունք չուներ» և այլն»:*

*Կանանց հանդեպ ուշադրությունը հասարակության կողմից ավելի մեծ է, և (կանանց) թերությունները ավելի արագ են տեսնում: Այն, ինչ կարող է իրեն թույլ տալ տղամարդը և դրա համար չարժանանալ որևէ պարսավանքի, կնոջ դեպքում շատ ծանր կարող է լինել: Օրինակները շատ-շատ են, մանավանդ Աժ-ում: Հնարավոր է՝ տղամարդիկ կռվեն, իրար ծեծեն, բայց կնոջ փոքր արարքները շատ ավելի մեծ քննադատության են արժանանում:*

Ըստ հարցվողների մի մասի՝ կանանց հանդեպ հասարակության վերաբերմունքի առանձնահատկությունը նաև այն է, որ եթե տղամարդ-գործիչի հանդեպ քննադատությունը տարածվում է միայն տվյալ անձի վրա և որակագրկում է միայն նրան, ապա կին-գործիչի հանդեպ քննադատությունը տարածվում է ողջ կանացի սեռի վրա՝ որակագրկելով ոչ միայն տվյալ կին-գործիչին, այլ իզական սեռը:

*Ենթադրենք մի կին հայտնվել ա թիրախում քննադատության: Հիմնականում դա ազդում ա բոլոր կանանց վրա, որովհետև նույն տղամարդիկ ասում են՝ «էս են, կանանց չի կարելի էդքան ներգրավել տարբեր ոլորտներում»: Ես կարծում եմ, որ յուրաքանչյուր կնոջ հանդեպ քննադատությունը ազդում է բոլորի վրա: Ես միշտ ասել եմ. այն կինը, որը լավ է աշխատում, այն կինը, որը ունի հեղինակություն, իր հետևից կարող է բացել դռներ շատ կանանց համար, և հակառակը՝ այն կանայք, որոնք այդ հեղինակության վրա ազդում են (վատ), պարզապես փակում են դուռը բոլոր կանանց դիմաց:*

Ըստ կին-գործիչների՝ հասարակության մեջ նաև տարածված է այն դիրքորոշումը, որ կին-գործիչն իրավունք չունի ստորադասելու **քնտանեկան գործառույթներն արտաքնտանեկան գործունեությանը**: Այդ իսկ պատճառով հասարակության կողմից առավել դրական վերաբերմունքի են արժանանում այն կանայք, որոնք ունեն ընտանիք, երեխաներ և կարող են հասարակությանը ներկայանալ «մոր» և «կնոջ» կերպարում: Այս գործոնները կանանց համար կարճես ոչ ֆորմալ «քննություն» են դառնում քաղաքական-հասարակական ակտիվ գործունեությամբ զբաղվելու **իրավունքը վաստակելու** հարցում:

Հասարակության վերաբերմունքի հարթությունում կան նաև առանձնահատկություններ, որոնք պայմանավորում են կանանց դժվարությունները՝ **ըստ ամուսնական կարգավիճակի**:

Հետաքրքրական է, որ

1. **ամուսնացած կանայք** իրենց հանրային դրսևորումները երբեմն գնահատում են իրենց ամուսինների շրջապատը կազմող տղամարդկանց պատկերացումների պրիզմայով և փորձում են համապատասխանեցնել սեփական դրսևորումները կնոջ այն կերպարին (հիմնականում՝ կանացի և նուրբ), որը **թույլ կտա իրենց ամուսիններին գերծ մնալ շրջապատի քննադատությունից**՝ կապված նրա հետ, թե իրենց կանայք չեն դրսևորում կնոջը հարիր պահվածք կամ խոսք,
2. **չամուսնացած կամ ամուսնալուծված** կանայք նշում են, որ նման խնդիրն իրենց համար ակտուալ չէ, սակայն ամուսին ունենալու դեպքում հաշվի կառնեին հասարակական այդ պահանջը՝ **պահելու ամուսնու պատիվը**:

*Ես ոչ մի բանով կաշկանդված չեմ: Միգուցե, որ ամուսին ունենայի մտածելի, թե ինչ կասեն իր ընկերները՝ լսելով իմ հերթական ընդդիմադիր ելույթը, օրինակ, ու ինքը ինչպես կզգար իրան: Բայց զոնե էդ իմաստով կաշկանդված չեմ:*

Որոշ հարցվողներ նշում են նաև, որ հայ հասարակության մեջ գենդերային խտրականության մասին խոսելիս սովորաբար փորձ է արվում այն **«լռեցնել» կամ քողարկել** կանանց նկատմամբ հարգանքի մի շարք արտաքին դրսևորումները մատնացույց անելով՝ մատուցելով դրանք որպես գենդերային խտրականության բացակայության ապացույց:

*Իմ վերջին հանդիպումների ընթացքում էլ էդպիսի միտք առաջ քաշեցին, որ հայ կինը Հայաստանում միշտ հարգված է եղել, հարգված է եղել ընտանիքում և այլն, և հայ կնոջը հնարավորություններ տալու խնդիր որպես էդպիսին չկա: Այսինքն՝ փորձ է արվում հայ կնոջ հարգված լինելու հանգամանքի տակ կոծկել այն, որ կինը իրականում ոչ միշտ է ունենում հնարավորություններ... որ թեկուզ աշխատանքային առաջխաղացում ունենա:*

Այսինքն՝ գենդերային խտրականության հարցը նաև առերես մերժվում է հասարակության կողմից:

**Իշխանության քաղաքականության հարթությունում (լծակների գործադրմամբ)**

Ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչ կին-գործիչները նշում են, որ իրենց քաղաքական գործունեության ընթացքում հիմնական խոչընդոտները պայմանավորված են իշխանության կողմից գործի դրվող **ապօրինություններով, հետապնդումներով, ճնշումներով** և այլնով, որոնք արվում են կա՛մ իրենց ընդդիմադիր դիրքորոշման համար

իրենց «պատժելու» նպատակով, կա՛մ, որովհետև այն կատարողները ցանկանում են իշխանություններին հաճոյանալ, ինչ-ինչ հարցեր լուծել դրանով:

Այս կարգի դժվարությունները հիմնականում կարելի է բաժանել երկու մասի.

1. ուստիկանական ճնշումներ,
2. ադմինիստրատիվ ճնշումներ:

Երկուսն էլ դրսևորվում են և՛ տղամարդկանց, և՛ կանանց նկատմամբ: Այսինքն՝ նշված դժվարությունների հետ բախվում են ոչ թե կանայք, այլ ընդդիմադիր գործիչները:

1. Ուստիկանական ճնշումները, ըստ հարցվողների, գործի են դրվում հանրահավաքների, երթերի, ակցիաների և այլ հանրային գործողությունների ժամանակ և, որպես կանոն, հակասում են ՀՀ Սահմանադրության դրույթներին:

Սակայն կա որոշ տարբերություն կանանց և տղամարդկանց նկատմամբ դրսևորվող ուժային գործողությունների հարցում. բոլոր ընդդիմադիր կանայք նշում են, որ ուստիկանության կողմից Ֆիզիկական բռնությունը և ձերբակալությունները հազվագյուտ բացառություններով կատարվում են միայն տղամարդկանց նկատմամբ: Այսինքն՝ այս հարցում երկրի իշխանությունը կամ ուստիկանությունը դրսևորում է տարբերակված մոտեցում՝ կախված ընդդիմադիր քաղաքացու կամ գործչի սեռից:

2. Ադմինիստրատիվ ճնշումները կատարվում են կա՛մ տվյալ գործչի, կա՛մ նրա հարազատի նկատմամբ աշխատավայրում և, ըստ հարցվողների, նպատակ են հետապնդում ստիպելու տվյալ գործչին հետ կանգնելու ընդդիմադիր դիրքերից, քննադատությունից:

Ընդհանրացնելով այս ենթագլխում ներկայացվածը, կարելի է ասել, որ գենդերային խտրականությունը կանանց դնում է մեկնարկային առավել ցածր դիրքերում, իսկ այն հաղթահարելու անհրաժեշտությունը ստիպում է ծախսել առավել շատ մտավոր, ֆիզիկական, հոգեբանական և այլ ռեսուրսներ, քան ծախսում են տղամարդիկ:

### **2.7. Գործունեության մեջ կանանց առավելությունները տղամարդկանց նկատմամբ**

Կին-գործիչների տեսանկյունից տղամարդկանց նկատմամբ կանանց հիմնական առավելությունները հետևյալն են:

1. Կանանց հանդեպ կա խնայող վերաբերմունք՝ պայմանավորված նրանով, որ կանայք ֆիզիկապես ավելի թույլ են համարվում:
2. Կանայք առավել համոզիչ են սեփական տեսակետները ներկայացնելու մեջ և սովորաբար հասնում են իրենց ուզած լուծմանը: Այստեղ, ըստ կին-գործիչների, դեր է կատարում նաև այն, որ տղամարդիկ հակված են ընկնելու «կանացի հմայքի» ազդեցության տակ, ինչը նվազեցնում է կանանց մերժելու հավանականությունը:
3. Գործնական միջավայրում

- կանանց *հետ* հարաբերություններն ավելի կոռեկտ են, քան տղամարդկանց *միջև*,

*Տղամարդիկ ավելի զգաստ են լինում կնոջ ներկայությամբ: Եթե բոլորը տղամարդ են, կարող են մի բան թույլ տալ, կանանց ներկայությամբ այդ մի բանը թույլ չեն տա, ավելի զուսպ են, ավելի կշռադատված են արտահայտություններում:*

*Կնոջ ներկայությամբ հանդուրժողականությունը շատ ավելի բարձր մթնոլորտում է լինում: Եվ եթե առանձին դեպքերում տղամարդիկ միմյանց նկատմամբ կարող են հանդուրժող չլինել, կանանց նկատմամբ և կանանց հետ շատ ավելի հանդուրժող են, ավելի չափավոր են իրենց արտահայտություններում և մտքերը շարադրելիս, կանանց ներկայությամբ վեճերը, կարծես թե, մարում են...*

- կանայք ավելի համարձակ են սեփական անհամաձայնությունն ուղիղ հայտնելու մեջ, քանի որ նրանք «տղամարդկային» («ռազբիրատի») կողերսներից դուրս են և չեն կարող բախվել դրանց բացասական հետևանքներին:

Հարկ է շեշտել, որ կանանց *այս բոլոր առավելությունները գործուն են միայն այն պարագայում, երբ միջավայրը (քաղաքական, աշխատանքային և այլն) մեծամասամբ տղամարդկանցից է բաղկացած և հատկապես՝ որոշում կայացնողները տղամարդիկ են:* Կանացի հմայքը և նշված մյուս ազդեցիկ գործոնները հիմնականում չեն կարող որոշիչ լինել մի միջավայրում, որտեղ որոշում կայացնողները և հիմնական գործող անձինք կանայք են:

Հարկ է շեշտել, որ, չնայած կին-գործիչները նշում են կանանց և տղամարդկանց հավասարության անհրաժեշտության մասին, այնուամենայնիվ «Զենտլմենության», կանանց հանդեպ ընդգծված մաներաների առկայությունը դրական են գնահատում:

*Երբեք այդպես չի կարող լինել, որ տղամարդիկ նստած, դու՝ կանգնած լինես: Նույնիսկ եթե դու մոտենում ես նստելու, տղամարդիկ բոլորը միասին կարող են կանգնել, և բոլորն առաջարկել իրենց տեղը: Կան կանոններ, որոնց մասին դու բարձրաձայն չես խոսում, բայց որը դու ընկալում ես որպես պարտադիր կանոն, որը չկատարվելու դեպքում դու քեզ նսեմացված ես զգում:*

## 2.8. Ինչի՞ց են զրկվել կին-գործիչներն իրենց գործունեության արդյունքում

**Կանայք** գլխավոր կորուստ են համարում

1. ընտանիքին (հատկապես երեխաներին) հատկացվող քիչ ժամանակը,

*Ես չեմ կարողանում իմ ընտանիքի հետ ավելի շատ ժամանակ անցկացնել, երեխաներիս հատկացնել այնքան ժամանակ, որքան կցանկանայի: Բայց, այդուհանդերձ, փորձում եմ հանգստյան օրերին գոնե կոմպենսացնել կամ երեկոյան կոմպենսացնել:*

2. բարեկամների ու ընկերների հետ հազվադեպ ժամանցը,
3. ամուսնավուծվածների և չամուսնացածների դեպքում նաև որոշ չափով ընտանիքի բացակայությունը:

Մակայն, չնայած այն համոզմունքին, որ կանանց համար ընտանիքի, երեխաների հետ շփումն առավել կարևոր է, զգացմունքային կապը՝ առավել ուժեղ, քան տղամարդկանց համար, **հարցվողներից ոչ մեկը չի ավստսում տվյալ կենսակերպն ընտրելու** և հանուն դրա **այդ կորուստներն ունենալու համար**:

Ավելին՝ հարցվողների մի մասը նաև համարում է, որ քաղաքական (և առհասարակ արտաընտանեկան) գործունեությունը կոմպենսացնում է այդ կորուստները, և առանց նման գործունեության իրենք իրենց բավարարված և լիարժեք չէին զգա:

### 3. Հարցվողների գենդերային կարծրատիպերը

#### 3.1. Կին-գործիչների կողմից կին և տղամարդ գործիչների առջև դրվող ընդհանուր պահանջները

Կին-գործիչների գերակշիռ մեծամասնությունը որևէ տարբերություն կնոջ և տղամարդու ընդունակությունների, կարողությունների և իրավունքների միջև չի դնում: Նրանց պատկերացումների համաձայն կանանց սազական է ինչպես ցանկացած ոլորտ, այնպես էլ ցանացած պաշտոն/դիրք:

*Եթե մարդը պարտաճանաչ ա իրա բնավորությամբ, իրա նատուրայով, կապ չունի ինչ բնագավառում ա աշխատում, ինչ բլոկում ա աշխատում: Դա ավելի շատ անձնավորված ա, քանց թե ասենք տղամարդ-կին խնդիր ա... Էդտեղ ավելի անձի խնդիր ա:*

Սակայն նրանք բոլորն այնուամենայնիվ գտնում են, որ կան վարվեցողության, պահվածքի տարբերությունների հարցում որոշակի կանոններ, որոնք տղամարդիկ և կանայք պարտավոր են պահպանել:

Կանանց դեպքում դա հիմնականում արտահայտվում է նրանով, որ, ըստ կին-գործիչների, զբաղվելով քաղաքականությամբ՝ կանայք չպետք է կորցնեն «կանացիությունը», դառնան «տղամարդակերպ» թույլ տալով իրենց այն, ինչ կարող են թույլ տալ իրենց տղամարդիկ: Սա նաև կարևորվում է այն առումով, որ, ըստ կին-գործիչների, «տղամարդացած» կանանց հանդեպ տղամարդ կուլեզաները կորցնում են հարգանքը, և այդ կանանց գործունեությունը բարդանում է նման վերաբերմունքի արդյունքում:

*Ես երբևիցե չեմ փորձում կնոջ դերը փոխել, հավասարեցնել տղամարդկանց, ոչ թե որովհետև հավասար չեմ համարում, այլ որովհետև համարում եմ, որ եթե ես շարունակում եմ կին մնալ, իրենք որպես տղամարդ իրենց ճիշտ են պահում իմ նկատմամբ:*

*Երբ դու քեզ ճիշտ ես պահում որպես կին, նույնիսկ քո հակառակորդ թիմակիցները չափից դուրս հարգալից են վերաբերվում քեզ և գնահատում են քո տեսակը:*

Տղամարդկանց դեպքում էլ պահանջը «տղամարդկությունը» պահպանելն է, որը չի ներառում, սակայն, մի շարք գծեր, որոնք, ըստ հարցվողների, դրսևորում են տղամարդ-գործիչները՝ կոպտություն, անտակտություն, շահամոլություն և այլն, քանի որ իրենք այդ գծերը «տղամարդկություն» եզրին խորթ են համարում:

Ի տարբերություն «կանացիության»՝ «տղամարդկություն» եզրի առանձնահատկությունները հարցվողներն ավելի դժվարությամբ են սահմանում, քանի որ դրան են վերագրում այն ամենը, ինչն ի վերջո պարտադիր են համարում

նան կանանց համար՝ համառություն, սկզբունքայնություն, նպատակայնություն, ազնվություն, հաստատակամություն և այլն:

Արդյունքում ստացվում է, որ «տղամարդկությունը» համամարդկայինն է՝ այն, ինչ պետք է բնորոշ լինի ցանկացած մարդու, իսկ «կանացիությունը» հավելյալ շտրիխ է, որը բնորոշ պետք է լինի միայն կանանց:

### 3.2. Կին և տղամարդ քաղաքական, պետական գործիչների կերպարները՝ ըստ կին-գործիչների

Քաղաքական, պետական գործիչների մասին կին-գործիչների պատկերացումները տարբերվում են՝ ըստ քաղաքական դիրքորոշման:

Ընդդիմադիր կին-գործիչների տեսակետների համաձայն՝ ՀՀ-ում կարևոր չէ գործչի սեռը նրա կերպարը նկարագրելու հարցում, այլ կարևոր է նրա քաղաքական ճամբարը:

Ըստ այդմ՝ իշխանական և՛ կին, և՛ տղամարդ գործիչների գերակշիռ մեծամասնությունը նկարագրվում է որպես «անգրագետ», «գող», «մարդասպան», «կամակատար» և այլ բացասական բնութագրիչներով, պարզապես տղամարդ-ներկայացուցիչները համարվում են այդ բացասական հատկությունների առավել մեծ չափով կրողները, քան կին-ներկայացուցիչները:

Բոլոր ընդդիմադիր կին-գործիչները բացասաբար են արտահայտվում ՀՀ-ում առավել հայտնի կին քաղաքական գործիչների մասին, որոնք իշխանական կուսակցություններին են պատկանում:

Ըստ ընդդիմադիր կին-գործիչների՝ իրենց համար ցանկալի որակները կրող գործիչները չեն կարող այս իշխանության պայմաններում որևէ պաշտոն զբաղեցնել (պատգամավորից բացի), քանի որ իշխանությունն այդ որակներն արտամղում է և պայքարում դրանց դեմ:

Մակայն հարկ է շեշտել, որ նույն այդ ընդդիմադիր կին-գործիչները կին քաղաքական գործիչներին համարում են իրենց կուսակցությունների համար ավելի վստահելի, հավատարիմ և ծանրակշիռ գործիչներ, քան նույն այդ կուսակցությունների տղամարդ անդամներին:

Ընդհանուր առմամբ՝ բոլոր հարցվողների շրջանում կին և տղամարդ գործիչների գնահատման հարցում նկատվում է հետևյալ միտումը:

45-ից բարձր տարիքի կին-գործիչները կին-գործիչներին դիտում են ավանդապես կանանց «սազական» համարվող որակների պրիզմայով և գնահատում ըստ նրա, թե որքանով «կանացի» կամ «տղամարդացած» են:



*Բնձ դուր չի գալիս, երբ քաղաքականության մեջ մտած կինը փորձում է նմանվել տղամարդուն և իր արտահայտչաձևերի մեջ սահմանափակումներ չի մտցնում:*

Իսկ տղամարդ-գործիչներին նկարագրվում են «համամարդկային» բնութագրիչներով՝ խելացի, կամակատար և այլն:

*Բնձ դուր են գալիս ազնիվ, ուժեղ, գաղափարական, սկրունքային տղամարդ քաղաքական գործիչները:*

Այսինքն՝ կին-գործիչների դեպքում առաջնահերթ գոյություն ունի «սեռային չափում», իսկ տղամարդ-գործիչների դեպքում՝ «անձնային չափում»:

45-ից ցածր կին-գործիչները և՛ կին, և՛ տղամարդ-գործիչներին նկարագրում են առավել բազմապիսի բնութագրիչներով՝ խելացի, կոռուպացված, ապաշնորհ, բարեկիրթ և այլն: Այսինքն՝ այս խմբում կին և տղամարդ գործիչները գնահատվում են՝ ըստ իրենց բուն գործունեության, այլ ոչ սեռային պատկանելության:

Ընդհանուր առմամբ պետք է ասել, որ բոլոր հարցվողները, անկախ քաղաքական դիրքորոշումից, տարիքից և այլ չափորոշիչներից, դրական են գնահատում կին քաղաքական գործչի գոյությունը, քանի որ համարում են, որ վերջիններս պակաս չափով են հատուկ այն բոլոր բացասական երևույթները, որոնք հատուկ են տղամարդ գործիչներին (կոռուպցիա և այլն), ուստի պետության համար բավականին ցանկալի ու պահանջված են:

### 3.3. Կանանց և տղամարդկանց կողմից դեկավարման ենթակա ոլորտները՝ ըստ կին-գործիչների

Այս հարցում կա հիմնականում **2 մոտեցում**, որոնք պայմանականորեն կարող ենք անվանել «ազատական» և «պահպանողական»:

1. **Ազատական** մոտեցման կրողները (և՛ կանայք, և՛ տղամարդիկ), որոնք հարցվողների մեծամասնությունն են, ելնում են այն համոզմունքից, որ երկու սեռերի ներկայացուցիչներին էլ բնորոշ կարող են լինել միևնույն գծերը:

*Մինչ այժմ մշակույթի, մեկ էլ սփյուռքի նախարարն է եղել կին: Բայց դա չի նշանակում, որ մյուս ոլորտները կանայք նույն հաջողությամբ չէին դեկավարի կամ նույն հաջողությամբ չէին տապալի այդ ոլորտները»:*

Ուստի որևէ ոլորտ կամ դիրք մեկին վստահելիս հարկ է ելնել նրա կարողություններից ու գիտելիքներից, այլ ոչ սեռային պատկանելությունից:

2. **Պահպանողական** մոտեցման կրողները, որոնք հարցվողների փոքրամասնությունն են, ելնում են կանանց ու տղամարդկանց դերերի և

ունակությունների մասին ավանդական պատկերացումներից՝ կանանց սազական համարելով այն ոլորտները, որոնք ավանադապես զբաղեցվել են կանանց կողմից, **մայրական դերերի կատարման հետ քննարկված նմանություն ունեն**, ինչպես նաև ասոցացվում են խնամքի, գեղեցկության, հոգատարության և այլ «կանացի» հատկանիշների հետ: Այդ ոլորտներն են կրթությունը, առողջապահությունը, մշակույթը, սոցիալական ապահովությունը և այլն:

*Կինը իր բնույթով, ծնունդով շատ ավելի օգնող է, չէ՞: Կարծում եմ՝ կինը ավելի լավ կդեկավարի առողջապահության ոլորտը, սոցիալական ապահովության ոլորտը, մշակույթի ոլորտը, որովհետև էդ խնդիրներին կինը շատ ավելի ծանոթ է:*

*Քաղաքաշինության կին-նախարար դժվար ա պատկերացնել: Բայց ասենք կին-նախարար կտեսնեմ կրթության և գիտության նախարարությունում, կին նախարար կտեսնեմ մշակույթի նախարարությունում, սփյուռքի նախարարությունում, բայց օրինակ սպորտի նախարարությունում կին-նախարար դժվար կպատկերացնեմ, միգրացիոն և շատ լավ աշխատի, բայց դժվար կպատկերացնեմ, կապի և տրասպորտի նախարարությունում դժվար կպատկերացնեմ, ուժային կառույցներում հաստատ չեմ տեսնի կին-նախարար:*

*Կոնկրետ իմ նախաձեռնությունները ավելի շատ սոցիալական ոլորտի են, ավելի շատ կրթական ոլորտի են. այն ոլորտներին են վերաբերվում, որը ավելի շատ կանացի է, դա մշակույթն է, կրթությունն է, սոցիալական ոլորտն է:*

Այսինքն՝ տվյալ կանայք նաև իրենք են փորձում մնալ «կանացի» ոլորտների շրջանկաներում:

Որոշ դեպքում կանանց համար ոչ սազական միակ գործունեությունն է համարվում զինված ուժերի ոլորտը, որում կանանց ներգրավումն անբնական և ոչ անհրաժեշտ է գնահատվում:

*Ես համարում եմ, որ կինը գենը չպիտի վերցնի ձեռքը, կովի: Եթե իհարկե դու պաշտպանում ես քո երկիրը, դա շատ կարևոր է էդ պահին, յուրաքանչյուրն էլ երևի դա կանի, դրա մասին չեմ ասում, բայց ես համարում եմ, որ պարտադիր այդ զինվորական ծառայությունը կանանց վրա չպիտի տարածվի:*

Մինչդեռ տղամարդկանց համար առավել սազական է համարվում ֆինանսների, արդյունաբերության և զինված ուժերի հետ առնչվող ոլորտների կառավարումը:

Այս մոտեցման հիմքում նաև ընկած է այն համոզմունքը, որ «ոչ կանացի» ոլորտները չափազանց ծանր կարող են լինել կանանց համար, իսկ կանանց անհրաժեշտ է խնայել, չծանրաբեռնել, հոգեբանական ապրումների չենթարկել:

### 3.4. Կանանց և տղամարդկանց կողմից զբաղեցման ենթակա դիրքերը՝ ըստ կին-գործիչների

Բոլոր կին-գործիչները նշում են, որ չկա որևէ պաշտոն, որը ենթակա չէ կնոջ կողմից զբաղեցվելու՝ սկսած ավագանու անդամից ու գյուղապետից, վերջացրած կուսակցապետով, նախարարով ու նախագահով:

Օրինակ՝

*Եթե մենք հաշվի առնենք, որ վերջին հաշվով գյուղերում հիմա մնացել են կանայք, որովհետև տղամարդիկ արտագնա աշխատանքի են: Գյուղը մնացել է կանանց ուսերին, և երբ գյուղատնտեսությունը կնոջ ուսերին է, տունը կնոջ ուսերին է և նաև գյուղի համար որոշումներ կայացնելը կնոջ ուսերին է, ես այդ պաշտոնում ավելի լավ թեկնածու, քան կինը, չեմ տեսնում:*

Այս մոտեցումը հիմնվում է կանանց այն համոզմունքի վրա, որ ղեկավարելու կանանց հմտությունները չեն զիջում տղամարդկանց, ավելին՝ հաճախ գերազանցում են, քանի որ կին-ղեկավարի դեպքում ընդհանուր հմտություններին ավելանում են նաև կանացի հատկանիշներ, ինչպիսիք են հոգատարությունը, մայրական վերաբերմունքը, արտացավությունը, «պակաս աչքածակությունը» կամ ազահությունը (տղամարդկանց համեմատ) և այլն, որոնք հարցվողների կողմից կարևոր են համարվում պետության մեջ պատասխանատու դիրքեր զբաղեցնելու, պետությունը զարգացնելու հարցում:

*Համապատասխան պատրաստվածություն ունենալու դեպքում յուրաքանչյուր խելացի կին յուրաքանչյուր ոլորտում շատ ավելի արդյունավետ է աշխատում, որովհետև կնոջ պատասխանատվության գիտակցումը շատ ավելի բարձր է, որովհետև նրանք մայր են և նույն կերպ են վերաբերվում, ինչպես իրենց ընտանիքներին ու զավակներին: Դա համաաշխարհային փորձն է ցույց տալիս:*

Այս համոզմունքն ամրապնդվում է կին-գործիչների այն դիտարկումներով, ըստ որոնց՝ օրինակ, կին-պատգամավորներն առավել պարտաճանաչ են ներկայանում նիստերին, առավել պատասխանատու են վերաբերվում սեփական գործին, ասելիքին, առավել պակաս են ներգրավված բիզնես ոլորտում, առավել քիչ կարողություն ունեն և առավել նվազ են աչքի ընկնում «օլիգարխությանը»:

*Կանանց մեջ պետք է առանձնացնեն իրենց պատրաստակամությունը, իրենց վրա վերցրած պատասխանատվությունը: Կոնկրետ ԱԺ-ի պատգամավոր կանանց մասին եմ խոսում: Անկեղծ ասած՝ ԱԺ նիստերին*

նայում ես, երբ պատգամավորների մեծ մասը բացակայում է դահլիճից, ամեն դեպքում ներկաները կանայք են: Եթե մենք նայում ենք 14 կանանց, որոնցից յուրաքանչյուրն իր չափով իր ոլորտում փորձում է ինչ-որ բան անել, տղամարդկանց մոտ մեծ մասը ոչինչ չի էլ փորձում անել:

Օրինակ՝ ընդդիմադիր կին-գործիչները նշում են, որ *իշխանական կուսակցությունում կանայք առավել քիչ են հակված անօրինական միջոցներով հարստություն կուտակելու կամ առավել քիչ քանակի հարստություն են կուտակում, քան միևնույն կուսակցության տղամարդիկ:*

Այստեղից եզրակացությունը, ըստ հարցվողների, այն է, որ կանայք, ի տարբերություն տղամարդկանց, առավել քիչ են կոռուպցիոն ռիսկեր առաջացնում և առավել արդյունավետ են պետական գործերի պատասխանատվությունը կրելու հարցում:

Սակայն այս մոտեցումը չի բացառում վատ կին-ղեկավարների, պաշտոնյաների գոյությունը, քանի որ, այնուամենայնիվ, որևէ **քաղաքական կամ այլ պաշտոն զբաղեցնելու հարցում կարևորվում է մասնագիտական բարձր պատրաստվածությունը, մարդկային բարոյական որակները, այլ ոչ անձի սեռային պատկանելությունը:**

Չնայած սրան՝ այնուամենայնիվ առավել **տարեց խմբի ներկայացուցիչ ամուսնացած կին-գործիչների** շրջանում նկատվում է կնոջ համար ընտանեկան պարտավորություններն առավել կարևորելու միտում, ուստի կնոջ կողմից ղեկավար դիրքեր զբաղեցնելն այնքան էլ ցանկալի չի դիտվում, քանի որ հնարավոր վնաս կարող է հասցնել նրա ընտանեկան պարտականություններին:

*Կան աշխատանքներ, որը տղամարդու աշխատանք է, ամեն օրվա զբաղվածություն, նվիրում առավոտից երեկո: Իսկ կինը ունի նաև այլ կարևոր աշխատանքներ. դա ընտանիքն է, երեխաներն են... դա էն ջերմությունն է, որը պակասում է կնոջ բացակայությունից, դու չես կարող քո օջախը ստեղծել, քո օջախում դու պետք է ստեղծես այն միջավայրը, որը բոլորին տուն է բերում: Այ էդ մտերմության, օջախի քաղցրության այ էդ կարևոր երկու գործոնները պիտի միշտ կնոջ համար ավելի կարևոր լինի, քան մնացածը: Դրա համար էլ չեմ սիրում ղեկավար կանայք, ղեկավար պաշտոններ:*

Այստեղ հարկ է նշել, որ տվյալ կանայք նույնպես զբաղեցնում են ղեկավար դիրքեր և այս հարցում ցուցաբերում են որոշակի **երկակի ստանդարտներ:**

### **3.5. Կին-գործիչների գենդերային նախապատվություններն աշխատանքում**

#### **Վերադասի սեռային պատկանելության հարցում նախապատվությունները**

Մեր կին-գործիչների գերակշիռ մեծամասնությունը զբաղեցնում է բարձր քաղաքական ստատուս, այսինքն՝ ղեկավար դիրք ունի տասնյակ ենթակաների նկատմամբ:

- Չնայած դրան՝ հարցված կանանց փոքր մասը **վերադասի** սեռային պատկանելության հարցում նախապատվությունը տալիս է **տղամարդուն**, քանի որ ցանկանում է սեփական գործունեության մեջ ամրություն և «մեջքի» զգացում ունենալ, ինչը զգում է միայն տղամարդ-վերադասի դեպքում:
- Իսկ մեծ մասը **որևէ տարբերություն, ըստ սեռային հատկանիշի, չի դնում** վերադասի հարցում, այլ կարևորում է մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, մարդկային որակները և այլն՝ անկախ վերադասի սեռային պատկանելությունից:

*Վերադասը պիտի լինի բանիմաց: Կարևորը գիտելիքներն են և համապատասխանությունը տվյալ հաստիքին:*

*Ոչ թե կին ու տղամարդ տարբերություն կա, այլ խելոք և ոչ խելոք դեկավար! Ժողովրդական սենց մի խոսք կա. «Գիտունին գերի եղիր, անգետին սիրելի մի եղիր»: Դա և՛ ընտանեկան հարաբերություններն ա վերաբերվում, և՛ աշխատանքային հարաբերություններին ա վերաբերվում: Եթե քո դեկավարը գիտակ ա, եթե խելացի ա շատ ավելի լավ ա իրա հետ աշխատել, քանց թե մեկի, որ չի հասկանում ոչ գործի սկիզբը, ոչ մեջտեղը, ոչ էլ վերջը:*

Կին-վերադասը կին-գործիչի համար ունենում է նաև որոշ առավելություններ, ինչը կապված է նրա հետ, որ կին-դեկավարի դեպքում կինն իրեն սեռական օբյեկտ չի զգում և ավելի բաց է հարաբերություններում:

*Ես ունեցել եմ տղամարդ-դեկավարներ, որոնք ֆանտաստիկ շատ լավն են եղել: Բայց մեկ ա, պահեր կա՝ նկատում ես, որ ինքը քեզ նայում ա որպես սեռական օբյեկտ: Ու էն ազատությունը, որ ունես կին-դեկավարի հետ, չունես տղամարդ-դեկավարի հետ իհարկե:*

Հատկանշական է, որ վերադասի սեռային պատկանելության հարցում առավել լոյալ հարցվողները նշում են, որ ունեցել են և՛ կին, և՛ տղամարդ վերադասների հետ աշխատելու փորձ, ինչը թույլ է տվել եզրահանգելու, որ սեռը կարևոր գործոն չէ վերադասի լավը կամ վատը լինելու համար և **տարբերությունները կախված են անձից** (քանի որ ունեցել են և՛ լավ, և՛ վատ կին ու տղամարդ-վերադասներ):

*Ես ունեցել եմ նաև կին վերադասներ՝ երկու դեպք, հիանալի հարաբերություններ, որովհետև երկուսն էլ շատ խելացի են եղել: Ստեղ սեռը կապ չունի, գիտեք, կարևորը մարդու ընկալումն ա:*

Մինչդեռ տղամարդ-վերադաս գերադասող հարցվողները չեն ունեցել կին-վերադասի հետ աշխատելու փորձ:

Մա թույլ է տալիս եզրակացնել, որ **անձնական փորձը** (նախադեպը) **հիմնականում հանգեցնում է գենդերային կարծրատիպերի թուլացման:**

**Ստորադասի սեռային պատկանելության հարցում նախապատվությունները**

Այս հարցում հարցվողների մեջ չի նկատվում որևէ տարբերություն. նրանք բոլորն այն կարծիքին են, որ ստորադասի հարցում կարևորը մասնագիտական հմտություններն ու մարդկային որակներն են, որում **սեռային պատկանելությունը կարևոր դեր չի կատարում:**

*Գերադասում եմ, որ խելացի լինեն ու պարտաճանաչ ու գործը իմացող կին կամ տղամարդ՝ կապ չունի:*

Թեպետ այնուամենայնիվ շեշտում են, որ ենթակաների դեպքում կանայք առավել **«կատարողական», պարտաճանաչ, պատասխանատու և պրոֆեսիոնալ** են:

*23 ընտրատեղամաս կա, 23-ից 16-ում երևի կանայք են տեղամասի ղեկավարները: Երբ-որ ես ցանկացած ընտրություններին մարդ եմ ուղարկում, իմ հանձնաժողովի ցուցակներում 82-ից 60-ը մենակ կանայք են: Որովհետև ավելի պատասխանատու են, ավելի պարտաճանաչ են, հանձնարարությունը, որ տալիս ես, իրենք ավելի որակով են կատարում և ավելի արդար են, ավելի ճշտի և օրինականության կողմնակից են:*

**3.6. Նախադեպը որպես գենդերային խտրականության նվազեցման գործոն**

Կանանց՝ ղեկավար դիրքեր զբաղեցնելու, որոշակի ոլորտներում ներգրավվելու մասին հարցվողների մեծ մասի համոզմունքի հիմքում **նախադեպն** է՝ ՀՀ-ում կամ աշխարհում հայտնի կին-գործիչների կամ կանանց ներգրավվածության մասին գիտելիքը: Ամենատարածված նախադեպերն են՝ **Անգելա Մերկել, Մարգրեթ Թետչեր, Հիլարի Բլինթոն, Քոնդոլիզա Ռայս և սկանդինավյան երկրներ:**

*Անգելա Մերկելը, Ինդիրա Գանդին և շատ այլ երկրներում կանայք վերցրել են էդ պատասխանատվությունը և շատ դրական արդյունքներով հետագայում անցել են պատմության գիրկը և նրանց առ այսօր հիշում են:*

**Նախադեպերը՝** հայ և այլազգի ազդեցիկ (դրական, թե բացասական) կին-գործիչների առկայությունը, հիմնականում դառնում է սեռային պատկանելության անկարևորության և անձնային հատկանիշների կարևորության ապացույց: Հետաքրքրական է, որ նախադեպի ազդեցության որպես **մեծամասամբ դեպի գենդերային խտրականության և ավանդական կարծրատիպերի թուլացման տանող գործոնի** մասին փաստում է նաև կին-գործիչների մի մասը՝ նշելով, որ սեփական օրինակով կարողացել է ընդլայնել այն հանրային հանդուրժողականությունը, որում գործում է, և ապացուցել իր, որպես կնոջ, կարող լինելը:

## 4. Քաղաքական ոլորտում կանանց ներգրավվածության առանձնահատկությունները

### 4.1. Քաղաքական ոլորտում կանանց ցածր ներկայացվածության պատճառները

Հարցվողների կողմից նշված հիմնական պատճառները բազմաթիվ են և դրսևորվում են ստորև բերված մակարդակներում:

#### Անձնային հարթություն

- Ըստ հարցվողների կանանց նվազ ներգրավվածությունը քաղաքական ոլորտում և հատկապես դրա բարձր դիրքերում պայմանավորված է նախ և առաջ ավանդական հասարակության կողմից կանանց տրվող **ավանդական դաստիարակությամբ**, որը հիմնականում ուղղված է կանանց մեջ հավակնությունները կոտրելուն:
- Ավանդական դաստիարակությունից անմիջականորեն հետևում է այն, որ կանայք աչքի են ընկնում **պասսիվությամբ**, ցածր ինքնագնահատականով ու անինքնավստահությամբ:

*Կանայք, հենց իրենք, որքանով է՞ն այսօր ուզում ներգրավված լինել հասարակական և քաղաքական գործընթացներում: Առայժմ քիչ կանայք են, որ իրենց տեսնում են ղեկավար պաշտոններում, չեն ուզում ստանձնել էդպիսի պատասխանատվություն: Եվ էդտեղ խնդիր կա դաստիարակության առումով... Կարծրատիպերի խնդիրներ կան: Մենք բազմաթիվ կանայք ունենք, ովքեր իրենց տեսնում են միայն ընտանիքում:*

*Էնպես չի, որ ընտրությունների ժամանակ ամեն տեղ շատ կանայք կան առաջադրված և չեն անցնում: Կապ ունի, թե ինչքանով է կինը ուզում, ինչքանով է իրեն տեսնում այդ բանում (դիրքում): Շատ դեպքերում նշանակություն ունի մրցակցությունը. տղամարդիկ շատ ավելին են, որոնք ուզում են պաշտոններ և ավելի շատ են ձգտում դրան:*

#### Ընտանեկան/բարեկամական հարթություն

Այս հարցում հարցվողները հիմնականում շեշտում են ընտանիքի կողմից դրվող **սահմանափակումներն ու արգելքները**, որոնք բխում են հայ ընտանիքների հայրիշխանականությունից և ավանդապահությունից:

*Կանայք կաշկանդված են նաև իրենց ընտանիքներով, իրենց ընտանիքներում ունեցած պատասխանատվությամբ, հետևաբար՝ նաև ինչ-որ տեղ օբյեկտիվ ա էդ վախի մթնոլորտը, որ գոյություն ունի (կանանց մոջ), որ շատ հաճախ կանայք չեն գնում քաղաքականություն:*

*Պատմում էին, որ շատ ակտիվ հասարակական գործունեությամբ զբաղվող կին է եղել, և երբ հասել է քաղաքականություն մտնելուն, ասել է՝ գիտե՞ք ամուսինս առարկում է: Եվ եղպես էր թեման փակվել է:*

*Ամեն ընտանիք ունեցող կին չի, որ համարձակություն ունի ընդդիմանալու և ընտանիքի շահերը մասամբ զոհաբերելու հանրային շահերին և սեփական կարիերան ապահովելուն: Եվ եթե նույնիսկ էդ մղումները ու ցանկություններն ունի, միանշանակ շատ հաճախ տղամարդու ակտիվ դիմադրությանն է հանդիպում, և էդ դեպքում նա ստիպված է լինում ընտրություն կատարել՝ «ընտանիք, թե՞ կարիերա», և շատ դեպքերում հայ կինը ընտրում է ընտանիքը:*

Ըստ կին-գործիչների՝ կանանց լայն շրջապատը նույնպես չի քաջալերում նրանց, և ընտանեկան գործառույթների կատարումը նրանց համար ավելի կարևոր է համարում, քան արտաընտանեկան գործունեությունը:

### **Հասարակական հարթության**

Ըստ հարցվողների՝ հասարակական մթնոլորտը՝ **հայրիշխանական մտածողությունը**, չի նպաստում կանանց առաջխաղացմանը, քանի որ **չի համարում կնոջը ղեկավար կամ ակտիվ գործունեության ունակ սուբյեկտ**:

*Մեր հասարակությունը չի ընկալում կնոջ դերը քաղաքականության մեջ:*

Հայ հայրիշխանական հասարակությունը նաև այնքան էլ չի արդարացնում կանանց արտաընտանեկան գործունեությունը՝ համարելով, որ **կանանց ակտիվությունը վնաս է հասցնում ընտանիքին**, քանի որ վերջինս պակաս ժամանակ է հատկացնում իր ընտանեկան գործառույթներին և մասնավորապես՝ երեխաների դաստիարակությանը:

*Հայ ընտանիքում սովորաբար համարվել է ավանդաբար, որ կինը ընտանիքի պահապանն է, խոհանոցի հիմնական աշխատողն է, երեխաների խնամակալն է, դաստիարակողն է, և նրա ֆունկցիաները հիմնականում էդ սահմաններում պիտի լինեն:*

### **ԶԼՄ-ների հարթություն**

Հասարակության ավանդական մտածողության ամրապնդման հարցում ոչ պակաս կարևոր դեր են կատարում ԶԼՄ-ները, որոնք սովորաբար **շրջանառում են գենդերային կարծրատիպերը** և կանանց գործունեությունն արծարծում են նրանց սեռային պատկանելության տեսանկյունից: Այսինքն՝ տղամարդ-գործիչների մասին գրելիս չեն ընդհանրացնում նրա արարքները՝ վերագրելով դրանք «տղամարդկային սեռին» և կասկած հարուցելով, թե արդյո՞ք տղամարդիկ իրավունք ունեն զբաղվելու քաղաքականությամբ: Մինչդեռ կին-գործիչների թերացումների մասին նշելիս, հաճախ ընդհանրացնում են դրանք՝ վերագրելով «կանացի սեռի» անկարողությանը՝ **թերահավատություն հայտնելով կանանց**



կողմից հասարակական-քաղաքական կամ այլ արտաքինտանտանական գործունեությամբ զբաղվելու իրավունքի հանդեպ:

Քաղաքական հարթությունում

- Կանանց առջև քաղաքական ոլորտում կանգնող դժվարությունն այն է, որ դրանում «խաղի կանոնները» կոշտ են (ոչ քաղաքակիրթ), և կանայք, չտիրապետելով անհրաժեշտ ռեսուրսներին, չեն դիմանում մրցակցությանը:

*Պայքարի մեթոդները շատ դաժան են և ամեն մի կին չի մտնի այդ պայքարի մեջ: Եթե ազնիվ քաղաքական պայքար գնար, ապա ես կարծում եմ, որ շատ կանայք շատ-շատ հաջողակ կլինեին, բայց նման համակարգում, նման պայքարի մեթոդների կիրառման պարագայում ես որպես կին չեի մտնի էդ պայքարի մեջ, որովհետև տղեղ պայքար է՝ վարկաբեկման մեխանիզմներ, ընտրակաշառքներ, կեղտոտ մեթոդներ...*

- Բացի այդ՝ քաղաքական դաշտում խաղի կանոնները ոչ միշտ են օրինական: Եվ կանայք, կրկին, չտիրապետելով «գործիքների» միևնույն զինանոցին, ինչ տղամարդիկ (ծեծ, սպառնալիք և այլն), իրենք են խուսափում նման ոլորտում ներգրավվելուց, քանի որ ցանկանում են խուսափել այդպիսի իրավիճակներից, որտեղ այդ «կանոնները» կարող են գործադրվել նաև իրենց նկատմամբ:
- Կանայք շեշտում են նաև, որ քաղաքական կառույցները նույնպես հակված չեն կանանց առաջ մղելու և գերադասում են իշխանությունը կիսել «իրար մեջ»:

*Տղամարդկանց մեծ մասի մոտ սեփականատեր լինելու հոգեբանությունն է: Խոսքս պաշտոնի վերաբերյալ է: «Ի սկզբանե մեզ է տրված սա»։ Այսպիսի հոգեբանություն կա, ինչը, բնականաբար, ինձ դուր չի գալիս:*

*Իրենց մոտ ինքնավստահությունը էնքան մեծ է, սեփական անձի գերազնահատուկը էնքան բարձր է. նրանց թույլ տեղը հենց դա է:*

Համակարգում (պետական կառույցներ և այլն)

- Հարցվողները նշում են, որ քաղաքական և այլ ոլորտներում (հատկապես բարձր դիրքերում) կանանց ցածր ներգրավվածության մեջ մեծապես մեղավոր է նաև պետության մեջ ընտանեկան՝ ավանդապես կանանցը համարվող գործառույթները թեթևացնող կառույցների բացակայությունը կամ ոչ օպտիմալ գործառնությունը:  
*Օրինակ՝ պետական մանկապարտեզներն ավելի վաղ ժամի են փակվում, քան ավարտվում է պետական կառույցներում աշխատանքը և այլն:*
- Բացի այդ՝ ավանդական հասարակության պայմաններում կանայք սոցիալական, ֆինանսական և այլ ռեսուրսներին ավելի պակաս չափով են տիրապետում, քան տղամարդիկ, ինչը կաշկանդում է նրանց, օրինակ, սեփական թեկնածության առաջադրման և այլ հարցերում:

- Պետական կառույցներում տարածված է այն մտայնությունը, որ ընտանեկան պարտավորությունների պատճառով «պատասխանատու» դիրքերում կնոջ **կատարողականությունը կարող է ցածր լինել:**

**4.2. Կանայք ԱԺ-ում և ավագանիում. քվոտաների համակարգը**

Բոլոր հարցվողները (բացառությամբ մեկի) պնդում են, որ համամասնական ցուցակներում **սեռային քվոտայի** պահանջը չլինելու դեպքում **կանանց թիվն ԱԺ-ում նվազ կլինի**, քանի որ

- կուսակցությունները չէին ներառի կանանց,
- կառույցի հակազդման պատճառով կանայք իրենք չէին առաջադրվի:

Այսինքն՝ կանանց հանդեպ խտրական վերաբերմունքն առկա է ոչ միայն պետական կառույցներում, որտեղ նշանակումները կախված են պետության բարձրաստիճան պաշտոնյաների կամքից (նախագահ, նախարար և այլն), այլև առանձին վերցրած **քաղաքական կուսակցություններում/միավորումներում**, որոնց որոշում կայացնող օղակները նույնպես, առանց օրենքի պարտադրանքի, **հակված չեն հնարավոր իշխանությունը (մանդատները) կանանց հետ կիսելու:**

*Ի սկզբանե իշխանության ձգտող տղամարդիկ չեն թողնում, որ կանայք կարողանան (առաջ գնալ): Կարծում եմ, որ ընտանիքն էլ կարող է թույլ տալ, հասարակությունն էլ որոշ իմաստով դեմ չի լինի, բայց տղամարդիկ չեն թողնում, որովհետև, Ձեր կարծիքով, հեշտ ա՝ լծակներ հանձնելը:*

*Կանայք չէինք ունենա, եթե քվոտա չլինի. Հավատացեք, 100%-անոց տղամարդիկ էին լինելու:*

Մեկ կին-գործիչ պնդում է, որ քվոտաների համակարգի բացակայության դեպքում **կանանց քանակն ԱԺ-ում նույնը կլինի**, քանի որ, եթե հրաժարվել են մյուս կանայք, ապա ԱԺ-ում այժմ առկա կանանց նույնպես կարող էին ստիպել հրաժարվել. միևնույն է, նրանց հաջորդելու էր հաջորդը եկող տղամարդը: Ուստի եթե այդ 14 կանայք ԱԺ-ում են, ուրեմն տվյալ կուսակցությունները ցանկացել են, որ նրանք ԱԺ-ում լինեն:

*Եթե կուսակցությունները չցանկանային, որ ԱԺ-ում լինին այդ 14 կանայիք, բնականաբար կանանցից յուրաքանչյուրն էլ կարող էր հրաժարվել մանդատից:*

**Կանանց հրաժարումը մանդատից**

Բոլոր կին-գործիչները պնդում են, որ առկա է այդպիսի երևույթ, երբ համամասնական կարգով պատգամավոր ընտրվելուց հետո **կին-թեկնածուները հրաժարվում են իրենց մանդատից:**

Այս երևույթի հիմնական պատճառներ են համարվում հետևյալները:

- Տվյալ կուսակցությունում **չկան բավարար քանակությամբ կարող կին-գործիչներ**, ուստի ցուցակներում ներառվում են կանայք, որոնք ընդամենը անհրաժեշտ քվոտան ապահովելու գործառույթ են կատարում, իսկ ընտրվելու հետո կա՛մ նախնական պայմանավորվածությամբ, կա՛մ սեփական կամքով հրաժարվում են մանդատից:
- **Տղամարդիկ ցանկություն չունեն իշխանությունը կանանց «հանձնելու»**, և տվյալ կանանց ներգրավում են միայն անհրաժեշտ քվոտան ապահովելու համար, որից հետո հետո նրանց դուրս են մղում՝ տղամարդկանցով փոխարինելու համար:
- Մանդատները որոշ կուսակցություններում կապվում են **կուսակցության մեջ ֆինանսական կամ այլ տիպի ներդրումների հետ**, և ումանք (այդ թվում՝ կանայք) կարող են դուրս մղվել ֆինանսական պայմանավորվածությունները խախտելու հետևանքով:

Իսկ քանի որ կանայք ՀՀ-ում առավել պակաս չափով են տիրապետում տարբեր ռեսուրսների (ֆինանսներ, սոցիալական կապեր՝ քվե բերելու համար և այլն), որոնք որոշիչ են ՀՀ-ում ընտրություններում, ապա առավել հաճախ են դուրս մղվում իշխանության բաշխումից:

- Կա նաև եզակի տեսակետ, որի համաձայն՝ զուտ կանանց հրաժարման խնդիր գոյություն չունի: Ըստ այս տեսակետի՝ կանանց հրաժարումները կապված են նրա հետ, որ տվյալ կանայք զբաղեցնում են այլ պաշտոններ և չեն ցանկանում իրենց աշխատանքը թողնել խորհրդարանական գործունեությամբ զբաղվելու համար:

*Հիմնականում այն կանայք են հրաժարվել, ովքեր որ ունեն պաշտոններ, ովքեր իրենց աշխատանքով են զբաղված: Երբ-որ ցուցակ են ձևավորում, հաշվի են առնում կանանց և՛ ունակությունները, և՛ անցած ճանապարհը, և՛ են աշխատանքը, որը իրենք կատարում են: Լինում են դեպքեր, երբ կանայք հրաժարվում են պաշտոնից, գալիս են պառլամենտ, լինում է՝ երբ չեն հրաժարվում և չեն գալիս պառլամենտ: Դա էլ է նորմալ, մարդուն չի կարելի պարտադրել:*

Կին-գործիչների մեծ մասը խոսում է նաև տարածված մի պրակտիկայի մասին, երբ կուսակցությունների ղեկավարները համամասնական թեկնածուներին ստիպում են նախապես (մինչ ընտրությունները) մանդատից հրաժարվելու դիմում գրել, որպեսզի ընտրություններից հետո կարողանան վերաձևավորել ԱԺ անցած պատգամավորների խումբը:

### **Կին-գործիչների վերաբերմունքը քվոտաների նկատմամբ**

Կին-գործիչների վերաբերմունքը քվոտաների նկատմամբ միանշանակ չէ:

Մի կողմից բոլոր կին-գործիչները քվոտաների համակարգը համարում են **անհրաժեշտ** միջամտություն՝ ղեկավար մարմիններում կին-պաշտոնյա տեսները **հասարակության մեջ սովորութեամբ անցնելու** («աչքին սովորեցնելու»), կանանց առաջ մղելու ազդու լծակ ունենալու համար:

*Քվոտաները չեն սիրում, բայց ինքը իրա պոզիտիվ ազդեցությունը ունի: Մի տեղ պիտի կտրես կոպիտ ձևով էլի, թե չէ, որ սպասենք էվոլյուցիային, չգիտեմ, 6000 տարի պիտի սպասենք: Բրուտալ ակցիաներ պետք ա անել՝ ծակել, կտրել, քվոտաներ մտցնել, մի բան պետք ա:*

Միննույն ժամանակ այդ համակարգը համարում են **խտրականության (թեկուզ դրական) դրսևորում** և դեմ են արտահայտվում՝ համարելով, որ այն ժամանակի ընթացքում պետք է դուրս մղվի:

*Ես կողմ եմ միայն այդ տեսակ պառլամենտին, որտեղ սեռային հատկանիշը չի, որ կարևորվում է, այլ այն, որ դու կարող ես լինել քաղաքական կամ կուսակցական գործիչ:*

Բացասական վերաբերմունքի պատճառներից է նաև այն, որ քաղաքական ուժերը, զուտ կանանց քվոտան ցուցակում ապահովելու համար արհեստականորեն առաջ են մղում կանանց, որոնք **համապատասխան չեն քաղաքական դաշտում գործունեություն ծավալելու համար**:

Քվոտաների համակարգը նաև ոմանց կողմից գնահատվում է որպես արհեստական և **ոչ լիարժեք աշխատող մեխանիզմ**, քանի որ քաղաքական միավորներն իրենց ընտրական ցուցակներն օրենքին համապատասխանեցնելուց և ընտրվելուց հետո կանանց դուրս են մղում՝ օգտվելով օրենքի անկատարությունից:

Իսկ օրենքը հարցվողներն անկատար են համարում, քանի որ պատգամավորի կամ ավագանու անդամի մանդատից կնոջ հրաժարվելու դեպքում նրա տեղը զբաղեցնում է ոչ թե հաջորդ կինը, այլ հաջորդ համարը (իսկ հաջորդ համարը միշտ տղամարդ է լինում): Ուստի, եթե քվոտաների համակարգով ԱԺ-ում և ավագանում կանանց ներգրավվածությունը մեծացնելու հարց է փորձում լուծվել, ապա պետք է օրենքում փոփոխություն մտցվի, որի համաձայն՝ **հրաժարված կնոջ տեղը պետք է զբաղեցնի հաջորդ կինը**: Այդ դեպքում, ըստ հարցվողների մի մասի, **գուցե նաև նվազեն մանդատից կանանց հրաժարումները**, քանի որ դա այլևս իմաստ չի ունենա. միննույն է նրա փոխարեն մեկ այլ կին է անցնելու:

## 5. Կին-գործիչների գործունեության առանձնահատկությունները կուսակցության ներսում

### 5.1. Մասնակցությունը կուսակցական աշխատանքներին

Հարցված բոլոր կանայք նշում են, որ պարտաճանաչորեն մասնակցում են կուսակցության այն հավաքներին, որոնց իրավունք ունեն մասնակցելու կամ որ խմբավորման անդամ, որ հանդիսանում են (վարչություն, որևէ հանձնաժողով և այլն) և երբեմն նաև ազդում են որոշումների կայացման վրա:

Կին-գործիչները նշում են, որ մասնակցում են ցանկացած կուսակցական աշխատանքի, եթե նման որոշում է կայացվում:

### Կուսակցական գործունեության բնույթը

Հարցված կանանց մեծ մասն ընդգրկված է կուսակցության այս կամ այն հանձնաժողովում՝ հիմնականում տնտեսական, մարդու իրավունքների և այլնի գծով: Կուսակցությունների կեսում բացակայում են կանանց հիմնախնդիրներով զբաղվող հատուկ խորհուրդները, ինչպես նաև նրանք չեն իրականացնում միայն կանանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակում:

Այս հարցում կարելի է առանձնացնել երկու հիմնական մոտեցում.

1. Հարցվածների մեծ մասը կանանց հիմնահարցերը չի առանձնացնում ՀՀ քաղաքացիների ընդհանուր հիմնախնդիրներից: Այս մոտեցման կրողների մեծ մասը ընդդիմադիր դիրքորոշում ունեցողներն են, որոնք համարում են, որ *ՀՀ-ում վաղ է խոսել բուն կանանց խնդիրներից, քանի որ լուծված չեն ՀՀ քաղաքացու հիմնաքարային խնդիրները, որոնց վրա էլ կենտրոնացնում են սեփական գործունեությունը*:

Բացի այդ՝ այս մոտեցման կողմնակիցների մի մասը կարծում է, որ միմիայն կանանց վերաբերող հիմնախնդիրները (բացառությամբ մի քանի կոնկրետ հարցերից՝ կապված մայրության հետ) այնքան լայն և ինքնաբավ չեն, որպեսզի առանձին դիտարկման կարիք ունենան, այլ հիմնականում առավել լայն համատեքստի մաս են և ներառվում են այս կամ այն ընդգրկուն հարցի մեջ. օրինակ՝ կանանց գործազրկությունը ՀՀ-ում առհասարական գործազրկության մի մասն է, ցածր վարձատրությունը ՀՀ-ում աշխատավարձերի անբավարար լինելուց ածանցված խնդիր է, կանանց նկատմամբ բռնությունը ՀՀ-ում շարքային քաղաքացու (անկախ սեռից) անպաշտպանության բաղկացուցիչ մասն է և այլն:

2. Հարցվողների մեկ այլ մասը անհատական նախաձեռնողականության մակարդակում այնուամենայնիվ ցուցաբերում է հետաքրքրություն բուն

**կանացի հիմնահարցերի նկատմամբ** և մասնակցում է օրենսդրական առաջարկների մշակմանը կամ դրանց քննարկմանը:

Կին-գործիչներից մեկը, օրինակ, ակտիվորեն զբաղվում է օրենսդրական առաջարկների մշակմամբ և կուսակցության ԱԺ խմբակցության միջոցով դրանց շրջանառմամբ, քանի որ գտնում է, որ, այնուամենայնիվ, կանանց կենսագործունեության առնչվող օրենսդրական համակարգը ՀՀ-ում թերի է և միտված չէ կանանց հիմնախնդիրների թեթևացմանն ու աշխատաշուկայում նրանց ներառելու խթանմանը:

*Նույն մասնագիտության դեպքում կինը ավելի քիչ ա վարձատրվում, քան տղամարդը: Նաև կնոջ ծնելիության աճին նպաստելու համար, պետք ա կնոջ էդ արձակուրդը մի տարվա դարձնել առնվազն 2.5-3 տարի: Ու բացի դրանից՝ օրենսգրքում գրված ա, որ վճարովի արձակուրդի դեպքում էդ մեկ տարվա ընթացքում, եթե հիմնարկը լուծարվում ա, կնոջը կարող են աշխատանքից ազատել: Ես օրինակ առաջարկել եմ արդեն, որ եթե իրավահաջորդ կա, ուրեմն իրավահաջորդը թող լինի վճարողը, որովհետև իրականում նա նպաստում ա, որ ազգը շատանա: Կամ որևէ կերպ պետությունը պահի էդ կնոջը:*

## **5.2. Ազդեցությունն իրենց անդամակցած քաղաքական միավորների որոշումների կայացման վրա**

Կին-գործիչների մեծ մասը նշում է, որ քաղաքական այս կամ այն միավորի կազմում, լինի դա կուսակցության վարչություն, կուսակցության որևէ հանձնաժողով, ԱԺ հանձնաժողով և այլն, երբևէ չի ենթարկվել խտրականության սեռի հիմքով, և հիմնականում կարողանում է ոչ միայն արտահայտել սեփական տեսակետները, մտնել բանավեճի մեջ, այլև հասնել սեփական կարծիքի ընդունմանը:

*Եթե դրանք կանոնադրության համաձայն չեն պահանջում քաղխորհրդի հաստատում և ընթացիկ հարցեր են, այս դեպքում իմ ձայնը ևս ունի իր կշիռը, այս դեպքում քննարկումների ժամանակ իմ կարծիքը, իմ խորհուրդները ևս հաշվի են առնում:*

*-Պարտադիր իմ կարծիքն ասում եմ, եթե քննադատելու խնդիր կա, ու ես իմ ասածը կարողանում եմ պնդել ու որոշման մեջ անցկացնել: Բոլորն էլ գիտեն, որ ես ասում եմ և փորձում եմ իմ ասած որոշման կետերը հասցնել:*

Կին-գործիչների հաղորդածի համաձայն՝ քաղաքական այն կառույցները, որոնց անդամակցում են (հիմնականում՝ սեփական կուսակցությունները), հակված են լսելու իրենց տեսակետները, երբ մասնագիտական, փորձագիտական կարծիք են հայտնում և հիմնավորում են այն փաստերով: Նրանք որևէ արհամարհական կամ ստորադաս վերաբերմունք չեն զգում իրենց նկատմամբ և գտնում են, որ իրենց մասնագիտական և այլ գիտելիքները պահանջված ու հարգված են իրենց կուսակցությունների կողմից,

ինչին, սակայն, մեծ մասը հասել է կուսակցության մեջ սեփական տեղը և վալիդությունը ապացուցելու երկար գործընթացի արդյունքում:

Կանայք մասնավորապես նշում են, որ սեփական տեսակետը հայտնելու հարցում իրենք կաշկանդված չեն և, անկախ արդյունքից, սովորաբար ազատորեն արտահայտում են այն:

Կին-գործիչների մի մասի դեպքում սեփական կարծիքն ընդունել տալը, սեփական խոսքը լսելի դարձնելը տրվում է դժվարությամբ, մյուս մասի դեպքում՝ առավել հեշտ: Սակայն առանձնահատկությունը երկու դեպքում էլ այն է, որ **մեծ մասը կուսակցության առավել կարևոր և լայն հարցերում որոշիչ ազդեցություն հիմնականում չունեն**, քանի որ կուսակցությունների մեծ մասում **տղամարդկանց տեսակետներն ինքնըստինքյան առավել ծանրակշիռ են համարվում**:

## 6. Կուսակցությունների գենդերային քաղաքականությունը և PR-ը

### 6.1. Կուսակցությունների գենդերային քաղաքականությունը

#### PR պատասխանատուների գենդերային աշխարհայացքը

Մինչ բուն գենդերային քաղաքականությանն անդրադառնալը հարկ ենք համարում համառոտ ներկայացնել կուսակցությունների PR պատասխանատուների (որոնց գերակշիռ մեծամասնությունը բարձր դիրքեր է զբաղեցնում կուսակցական կառույցում) **գենդերային աշխարհայացքը**, քանի որ այն, ըստ մեզ, որոշ պատկերացումներ է տալիս կուսակցությունների գենդերային քաղաքականության և PR-ի մասին, քանի որ հաճախ անմիջականորեն ազդում է դրանց վրա:

Այսպիսով՝ PR պատասխանատուների գերակշիռ մեծամասնությանը կարելի է բնորոշել՝ որպես **ազատամիտների (ոչ պահպանողականների)**, որոնք լիովին ընդունում են կանանց և տղամարդկանց իրավահավասարության կոնցեպցիան, ինչպես նաև դրական, նույնիսկ **խրախուսող վերաբերմունք ունեն քաղաքական դաշտում, պետական կառավարման մեջ կանանց ներգրավման հանդեպ**:

*Պատմությունը ցույց ա տալիս և փորձը էսօրվա նաև զարգացած երկրների, որ կինը կարա լինի պաշտպանության նախարար, կարա լինի ներքին գործերի նախարար, այսինքն՝ չկան էդպիսի հասկություններ (միայն տղամարդուն կամ կնոջը բնորոշ), էդպիսի սահմաններ չկան իրականում (PR պատասխանատու, տղամարդ):*

PR պատասխանատուների դեպքում նույնպես զգացվում է նրանց աշխարհայացքի ձևավորման վրա **«կին-գործիչ ՆԱԽԱԴԵՊԻ»** ազդեցությունը: Տվյալ հարցվողները քաղաքական ոլորտում կանանց ներգրավվածության հանդեպ սեփական դրական կամ «ոչ խտրական» վերաբերմունքը բացատրում են՝ հիմնվելով հայտնի կին-գործիչների օրինակների վրա, որպիսիք են՝ Մարգրեթ Թետչերը, Անգելա Մերկելը, անցյալից վերցված կերպարներ՝ Ժաննա դ'Արկը, կին-հրամանատարներ և այլք: Այս կանայք հանդես են գալիս որպես «ապացույցներ», որ կին-գործիչներն ի վիճակի են ներգրավվել ցանկացած ոլորտում կամ զբաղեցնել ցանկացած դիրք, քանի որ, ըստ PR պատասխանատուների, կարևորը ոչ թե սեռն է, այլ տվյալ անձի ունակությունները, գիտելիքները և այլն:

*Իսրայելում իրա ամենաճանրագույն պատերազմական իրավիճակում պաշտպանության նախարարը կին էր. հստակ իրա առաջ դրված խնդիրները շատ լավ լուծեց, երկրի սահմանները մեծացրեց: Եվ լիքը դեպքեր կարանք նշենք, երբ-որ տղամարդ ա եղել (այլ երկրներում) ու ամբողջովին ձախողվել ա իրա գործունեությունը, ի՞նչ կապ ունի սեռը: Մարգրեթ Թետչերը, որ վարչապետ էր, շատ ծանր որոշում կայացրեց պատերազմում ու դուրս եկավ տակից, ի՞նչ վատ էր (PR պատասխանատու, տղամարդ):*



Հարցվողների մեծ մասը նշում է նաև ՀՀ-ում գենդերային խտրականության առկայության մասին՝ դրա հիմքում տեսնելով հասարակության ավանդապաշտությունը, որը

- պատրաստ չէ ընդունելու կին քաղաքական գործչի առկայությունը,
- խոչընդոտում է կին-գործիչների ի հայտ գալը, քանի որ կոտրում է կանանց նախաձեռնողականությունը սոցիալականացման ընթացքում:

*Տեսեք, ես մի օրինակ բերեմ Ձեզ. Հայաստանում չկա ոչ մի կին-քաղաքապետ: Ձեր մոտ հարց չի՞ առաջանում, թե իսի՞, իսի՞ չկա: Ուրեմն մի բան էն չի, որ չկա: Մարգպետ էլ չունենք: Տեսեք հարց ա, չէ՞, իսկ ինչի՞ չկա: Խնդիրն էն ա, որ հասարակությունը պատրաստ չի, մեր հասարակությունը դեռ պատրաստ չի (PR պատասխանատու, տղամարդ):*

PR պատասխանատուների մեծ մասի տեսակետների համաձայն՝ գենդերային խտրականությունը բնորոշ է նաև քաղաքական ոլորտին, մասնավորապես կուսակցություններին, որոնք, ըստ նրանց, համամասնական ցուցակներում կանանց ներառում են անհրաժեշտ քվոտաները լրացնելու համար, իսկ այնուհետև ստիպում են կանանց հրաժարվել մանդատից:

*Իրանք ռեսուրս չեն ներդնում, որ էդ կանայք հավասար տղեքին սովորեն, պատրաստվեն: Ու պառլամենտական ցուցակի պահով, քանի որ մեր մոտ քվոտավորված ա, պարտադիր պետք ա կանայք լինեն, ինչ-որ բուտաֆոր մարդկանց գտնում են, իրանց ծանոթ-մանոթ, սիրուհի, չգիտեմ՝ ով ինչ պրինցիպով, բերում են ցուցակ, հենց ընտրվում են, հետո սկսում են կամաց-կամաց հանել ցուցակից (PR պատասխանատու, տղամարդ):*

Հարցվողների մեծ մասը նաև վստահ է, որ քվոտաների բացակայության դեպքում կանայք ԱԺ-ում ավելի փոքր քանակ կկազմեն:

Սակայն, խոսելով սեփական կուսակցության մասին, բոլոր PR պատասխանատուները, բացառությամբ մեկի՝ կնոջ, պնդում են որ դրանցում գենդերային խտրականության բոլոր ձևերը բացակայում են, և կանայք կուսակցական վերընթացի հարցում չեն ունենում որևէ խոչընդոտ, քանի որ իրենց կուսակցությունները կանանց առաջ մղելու հարցում հենվում է ոչ թե նրանց սեռի, այլ կատարած աշխատանքի ու գիտելիքների վրա:

*Անցած ճանապարհի, կրթություն, գիտելիքներ, փորձ, կազմակերպչական ունակություններ... բոլոր էն պարամետրերը, որոնք անհրաժեշտ են մարդուն գնահատելու և նրան ներգրավելու համար, հաշվի են առնվում (PR պատասխանատու, տղամարդ):*

Կուսակցության ներսում գենդերային խտրականության առկայության մասին նշում է միայն մեկ PR պատասխանատու, որը նաև միակ կին ներկայացուցիչն է հարցվողների «PR մասնագետ/պատասխանատու» կատեգորիայում: Ըստ այս կնոջ՝ կուսակցությունները հասարակության մինի-մոդելներն են, որոնցում արտացոլված է գենդերային խտրականության այն ողջ պատկերը, ինչ առկա է հայ հասարակության մեջ առհասարակ:

*Վերցրեք, բոլոր կուսակցությունները: Ամեն տեղ խախտված է բալանսը, կանանց և տղամարդկանց բալանս չկա: Բայց մեր հասարակությունում մ ա բալանսը խախտված: Եթե դուք նայեք մեր բնակչությանը, մեծամասնությունից ավելին կանայք են, բայց ղեկավարողները բոլորը տղամարդիկ են: Այդ բալանսը բնականաբար խախտված է կուսակցությունում (նկատի ունի իր կուսակցությունը), որովհետև վերջ ի վերջո իրենք (տղամարդիկ) են ներկայացնում: Հասարակությունում ինչ-որ կա, արտացոլումը փոքրիկ ձևով դուք տեսնում եք կուսակցությունում: Դա հայ տղամարդու վերաբերմունքն է հայ կնոջ նկատմամբ: Եթե դու խելացի ես, ծայրահեղ դեպքում կարող ես գործավար լինես: Երբեք տղամարդը չի տեսնի, որ ես կինը կարող է լավ ղեկավար լինել: Դու խելացի ե՞ս, լավ՝ դու աշխատի... դու մեղուն ես (կին-գործիչ):*

Գենդերային հարցերի հանդեպ իր վերաբերմունքով առանձնանում է միայն մեկ PR պատասխանատու, որի պատկերացումների համաձայն՝ ՀՀ քաղաքական դաշտում կանայք ավելին են, քան անհրաժեշտ է, և այդ ավելցուկը գալիս է քվոտաների համակարգից և կանանց խրախուսելու ու քաղաքական դաշտում ներգրավելու այլ արհեստական միջամտություններից: Ըստ այս հարցվողի՝ նման մեխանիզմները ստիպում են քաղաքական ոլորտ ներառել կանանց, որոնք դրան բոլորովին պատրաստ չեն և չեն համապատասխանում:

Ավելին՝ տղամարդկանց համեմատ կանանց զգալի պակաս ներգրավվածությունը պետության կառավարման ոլորտներում տվյալ հարցվողը բացատրում է կանանց բնույթով, համարելով, որ կանանց մեծ մասը պակաս ունակ և կարող ուժ է, քան տղամարդը:

Արտակուսակցական գենդերային քաղաքականությունը

Ինչպես արդեն վերը նշվեց, հարցման մեջ ներառված կուսակցությունների մի մասը չունի կանանց հարցերով զբաղվող առանձին հանձնաժողովներ կամ խորհուրդներ:

Կանանց խորհուրդներ ունեն ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն (կանանց և երիտասարդ աղջիկների 2 առանձին խորհուրդ), ՕԵԿ-ը և ՀՅԴ-ն, որոնք զբաղվում է կանանց հարցերի վերհանմամբ, լուծմամբ և այլնով:

Կուսակցությունների մի մասը, որում բացակայում են կանանց խորհուրդները, կուսակցության ծրագրերում և մշակվող օրենսդրական նախագծերում նույնպես ներառում է կանանց հիմնախնդիրներին առնչվող տարատեսակ առաջարկներ:

*Ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչներն, այնուամենայնիվ, նշում են, որ իրենց կողմից նման նախագծերի առաջարկները հիմնականում ապարդյուն են, քանի որ ԱԺ-ում չունեն մեծամասնություն դրանք առաջ մղելու համար և գրկված են լոբինգի համապատասխան լծակների:*

Կին-գործիչների փոքր մասը և PR պատասխանատուներ մեծ մասը որևէ հետաքրքրություն չի ցուցաբերում գենդերային հիմնախնդիրների հանդեպ հիմնականում 2 պատճառով:

- Նրանց մի մասը գենդերային խտրականությունը համարում է **ոչ թե օրլեկտիվ, այլ սուրլեկտիվ երևույթ**: Այսինքն, ըստ նրանց, այն ոչ թե կանանց առաջընթացի առջև դնում է առարկայական խոչընդոտներ, այլ **ազդում է կնոջ հնքնագիտակցության վրա**՝ ձևավորել նրան որպես թույլ էակ, և կինն արդեն ինքը չի կարողանում հասնել իր նպատակներին: Ըստ այս մոտեցման՝ եթե կինը չի ցանկանում լինել երկրորդական, չի վերցնում իր վրա թույլի, անպաշտպանի կեցվածքը, ապա առաջ է գնում և որևէ անհաղթահարելի խոչընդոտի չի հանդիպում:

*Յուրաքանչյուր մարդ ինքն է որոշում՝ ինքը թույլ էակի կերպարի մեջ մտնի՞, թե՞ չմտնի: Որովհետև իրականությունը դա չի, իրականում կանայք ավելի տոկուն են, ավելի դիմադրող են, ավելի պայքարող են, ավելի վճռական են, ավելի անվախ են: Մարդ կա, կարծես թե ընդառաջ է գնում ցանկացած խտրականության, մարդ էլ կա, որ իր պահվածքով, գործելաոճով, նիստուկացով թույլ չի տա երբևէ որևէ մեկը իր նկատմամբ էդ խտրականությունը կիրառի: Ես երբեք չեմ զգացել (կին-գործիչ):*

- Մյուս մասը պարզապես ՀՀ-ում **առավել կարևոր է համարում այլ թեմաներով իր զբաղվելը**:

*Ես ինքս, լինելով կին, չեմ սիրում գենդերային թեման: Ես ընդունում եմ, որ Հայաստանում կանանց իրավունքների ոտնահարման հետ կապված լրջագույն խնդիրներ կան, և ողջունում եմ էն մարդկանց, ովքեր էդ ուղղությամբ աշխատանք են տանում, բայց իմ զբաղվածությունը մի քիչ այլ բնույթի է: Օրենսդիր դաշտում օրինակ գենդերային օրինագիծ կար, որը պիտի ընդունվեր, առաջին ընթերցումով անցավ, հիմա շտկումներ են արվում էնտեղ, ես ինքս չեմ ներքաշվում գենդերային խնդիրների մեջ (կին-գործիչ):*

Կանանց առաջխաղացմանն ուղղված օրենսդրական առաջարկությունների հարցում նկատվում է նաև մի մտավախություն՝ կապված **«գենդերային» աղմուկի** («Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրինագծի) հետ: Կին-գործիչները նշում են, որ հասարակության և

մասնավորապես ՁԼՄ-ների բարձրացրած աղմուկի հետևանքով այլևս զգուշանում են հանդես գալ կանանց առնչվող առաջարկություններով, քանի որ հնարավոր է, որ դրանք հասունացած չլինեն հասարակության կողմից ընդունվելու համար կամ թյուրըմբռումների ու աղմուկի տեղիք տան:

Առհասարակ նշվում է, որ **կանանց իրավահավասարության վերաբերյալ նախագծերը բավականին դժկամության են ընդունվում հասարակության կողմից:**

**Ներկուսակցական գենդերային քաղաքականությունը**

Բոլոր հարցվողների տեղեկատվության համաձայն՝ ընտրանքում ներառված կուսակցությունները **չունեն ներկուսակցական գենդերային քաղաքականություն**՝ կուսակցության ղեկավար դիրքերում (վարչություն, հանձնաժողովներ և այլն), կանանց ներառելու, կանանց առաջընթացը կուսակցության ներսում խթանելու համար: Օրինակ՝ որևէ կուսակցություն չունի ներկուսակցական քվոտաների համակարգ վարչության կազմում կանանց թվի կարգավորման կամ հանձնաժողովների ղեկավար դիրքերում կանանց ներառման համար:

Գենդերային քաղաքականություն հարցվողների գերակշիռ մեծամասնության՝ և՛ կանանց, և՛ փիար մասնագետների/պատասխանատուների կողմից ավելորդ է համարվում 2 հիմնական պատճառներով:

1. Նման քաղաքականության առկայությունը **խտրականություն է համարվում** (թեկուզ դրական՝ սակայն, այնուամենայնիվ, խտրականություն):

*Ասենք՝ օբյեկտիվորեն Ղուբ որպես անձ լիդեր չեք, բայց շատ լավ էքսպերտ եք, բայց մենք ստիպված լինենք Ձեզ նշանակենք նախագահ, քանի որ քվոտավորում կա: Իմ խորին համոզմամբ դա խտրականության դրսևորում ա (PR պատասխանատու, տղամարդ):*

Նրանք նշում են, որ, քանի որ **իրենց կուսակցություններում չկա որևէ խտրականության դրսևորում**, և կանայք առանց որևէ խոչընդոտի կարողանում են կուսակցական առաջընթաց ունենալ, ուստի գենդերային հատուկ քաղաքականության կարիք իրենց կուսակցություններում չի զգացվում:

*Մեր կուսակցությունում, ինձ թվում ա, կանանց ներգրավվածությունը կուսակցական գործունեության մեջ նույնքան ա, ինչքան որ Հայաստանում ընդհանրապես: Այսինքն՝ ոչ ավելանում ենք, ոչ արհեստականորեն պակասացնում, բայց որոշ դեպքերում փորձում ենք կանանց ավելի շատ ներգարվել, որ պահպանենք էդ (PR պատասխանատու, տղամարդ):*

2. Քանի որ **կանայք քաղաքական ոլորտում քանակապես քիչ են**, գենդերային հատուկ քաղաքականության՝ քվոտաների և այլնի առկայությունը ընդամենը կուսակցությանը պիտի կանգնեցնի այդ պահանջները գուտ ֆորմալ առումով կատարած լինելու համար «արհեստականորեն» կանանց ներառելու խնդրի առջև, ինչի արդյունքում կարող են առաջընթաց ունենալ ոչ թե արժանիները,

մասնագետները և այլն, այլ կանայք, որոնք համապատասխան չեն այս կամ այն դիրքին, և այդ դիրքում են միմիայն գենդերային ֆորմալ պահանջը կատարելու համար:

*Հայաստանում օբյեկտիվորեն կանանց մասնակցությունը քաղաքականությանը քիչ ա: Հիմա մենք օրենք ունենք, որ նախընտրական ցուցակների մեջ ամեն հինգերորդը պետք ա լինի կին, օրենք ա չես կարա խախտես: Բայց ենթադրենք պատկերացրեք, որ մի հատ քաղաքական ուժ ա, որը ոչ մի կին համակիր չունի: Հետո՞, ինչ անի էդ խեղճ քաղաքական ուժը, զնա արհեստականորեն կանայք բերի համոզի, կցի իրա ցուցակ կամ իրա կուսակցություն՝ (PR պատասխանատու, տղամարդ):*

Այն կին-գործիչները, որոնք զբաղեցնում են հանձնաժողովի նախագահի, վարչության անդամի և կուսակցության որևէ այլ բարձր դիրք, նշում են, որ այդ դիրքում են նշանակվել կուսակցության ղեկավարի կամ ղեկավար խմբի կողմից, ինչում իրենց սեռային պատկանելությունն դեր չի կատարել. նշանակումը հիմնված է եղել իրենց մասնագիտության և փորձառության վրա:

Երկու կատեգորիայի (և՛ կին-գործիչներ, և՛ PR պատասխանատուներ) հարցվողների մեծ մասը նշում են նաև, որ իրենց կուսակցություններում չի տեսնում գենդերային խտրականության դրսևորումներ, քանի որ կանանց քանակը շատ է ոչ միայն շարքային անդամների մեջ, այլև հանձնաժողովներում կամ ղեկավար դիրքերում:

*Թվային էսպես չեմ կարող ասել, բայց հանձնաժողովների մեծ մասում կանայք են, նաև տնտեսական հանձնաժողովի նախագահը կին է... և ունենք նաև կանանց խորհուրդ և երիտասարդ աղջիկների խորհուրդ (կին-գործիչ):*

*Մեր վարչությունում, օրինակ, կան մի քանի հարյուր մարդ, որոնց մոտ 35%-ը կանայք են (կին-գործիչ):*

Սակայն մյուս կողմից նշում են, որ կանայք ավելի շատ են շարքային անդամների, հանձնաժողովների կամ այլ մարմինների շարքերում, քան կուսակցության ղեկավար մարմիններում:

Այստեղ կարելի է նկատել, որ կին-գործիչները պարզապես խուսափում են սեփական կուսակցությունների մասին ուղիղ արտահայտվելուց, սակայն ընդհանուր բնութագրումներում նշում են նաև գենդերային խտրականության առկայության մասին, որը հիմնականում դրսևորվում է «ապակյա առաստաղի» տեքստով՝ կուսակցության մեջ կանանց կողմից բարձր դիրքեր զբաղեցնելու հանդեպ դիմադրողությամբ:

**Համամասնական ցուցակներում կանանց ընդգրկման քաղաքականությունը**

Համամասնական ցուցակների կազմման հարցում կա հիմնականում երկու մեխանիզմ:

- Ցուցակները կազմվում են կուսակցության վարչության կողմից և հաստատվում ղեկավարի կողմից, որն որոշ փոփոխություններ է մտցնում:
- Ցուցակները կազմվում են առավելապես ղեկավարի կողմից՝ վարչության խորհրդակցությամբ:

Հարցվողները նշում են, որ կանայք համամասնական ցուցակներում ներառվում են՝ ըստ իրենց կուսակցական ակտիվության աստիճանի, կատարած աշխատանքի, մասնագիտական որակների, անցած քաղաքական ուղու և այլնի:

*Կանայք ներառվում են ըստ նրանց ակտիվության, ըստ նրանց կրթական մակարդակի, հասարակական դերակատարության, ճանաչվածության, հեղինակության. այն հատկանիշների, որ ամենուրեք կարևոր են (կին-գործիչ):*

*Դե որոշումները կայացվում են ընտրություններից առաջ՝ ելնելով այն հանգամանքից, թե որ կինը ինչքանով ա պետք է աշխատանքներում... և նաև մասնագիտական ունակություններից (կին-գործիչ):*

Թեպետ քվոտաների համակարգի քննարկման համատեքստում կին-գործիչները նշում են գենդերային խտրականության դրսևորումների մասին, սակայն սեփական կուսակցությունների մասին խոսելիս հիմնականում բացառում են գենդերային խտրականության առկայությունը դրանցում: Այսինքն՝ **մի կողմից նշում են, որ քվոտաների պարտադրանքի բացակայության դեպքում կանայք զգալի պակաս կլինեին ԱԺ-ում, մյուս կողմից՝ սեփական կուսակցությունը դուրս են դնում այդ «ավանդույթից»՝ համարելով, որ իրենց կուսակցության համամասնական ցուցակներում կանայք ներառված են միմիայն սեփական վաստակի շնորհիվ:**

Ի դեպ՝ այն կին-գործիչները, որոնք ներառված են եղել համամասնական որևէ ցուցակում, **իրենց ներգրավվածությունը չեն դիտում քվոտաների ապահովման պարտադրանքի արդյունք՝ համարելով, որ նույն դիրքում կլինեին նաև քվոտաների բացակայության դեպքում:**

*Շատերին թվում էր, որ ես որպես կին եմ վեցերորդը (ԱԺ-ում): Ես ստիպված էի լինում բացատրել, որ ժամանակին 15-ից մեկը պիտի կին լիներ Երևան քաղաքի ավագանու ընտրությունների ժամանակ, բայց էն ժամանակ էլ վեցերորդն էի (կին-գործիչ):*

## **6.2. Կուսակցությունների PR քաղաքականությունը**

Բոլոր հարցվողները PR ասելով՝ հասկանում են արված ծրագրերի կամ եղած երևույթների, այլ կերպ ասած՝ **«իրականության» մասին հասարակությանն իրազեկելը:** Կա մի դրույթ, որը հարցվողների գերակշիռ մեծամասնության համոզմունքն է և PR-ի մասին իրենց պատկերացումների հենքը:

Ըստ այդ դրույթի՝ **որևէ PR էֆեկտ չի կարող երկարատև լինել, եթե հիմնված չէ իրականության վրա:** Իսկ այն ինչ հիմնված է իրականության վրա, PR չէ, այլ

ինքնաներկայացում: Ուստի որքան էլ որևէ գործիչ կամ կուսակցություն փորձի կերտել որոշակի կերպար, այն կարճատև արդյունք կտա և «թիթեռի կյանք» կունենա, եթե հիմնված չէ իրականության վրա:

Քչերը նաև անբարոյական են համարում պատվերի դիմաց քաղաքական PR-ով զբաղվողներին՝ համարելով, որ վերջիններս փողի դիմաց զբաղվում են մի գործունեությամբ, որի հետևանքներն արդյունքում ազդելու են իրենց կյանքի վրա, և որի պատասխանատվությունն իրենք չեն պատրաստվում կրել:

Հարցման ենթարկված բոլոր կուսակցություններն իրենց PR-ով առհասարակ զբաղվում են միայն նախընտրական շրջանում, իսկ «ոչ ընտրական» ժամանակահատվածներում կոնկրետ PR խնդիրներ իրենց առջև չեն դնում:

Նախընտրական PR քաղաքականության մշակման համար սովորաբար ստեղծվում է մի խումբ, որն էլ որոշում է PR-ի ուղղվածությունը, ուղերձները և այլն: Տվյալ խմբերում ներառվում են ոչ անպայմանորեն PR մասնագետներ, այլ կուսակցական ակտիվիստներ:

Մեր կողմից հարցման ենթարկված կուսակցությունների դեպքում տվյալ խմբերում PR մասնագետներ, որ ֆունդամենտալ կրթություն ունենան այդ ոլորտում, չեն եղել: Այսինքն՝ PR քաղաքականությունը կազմվել է կուսակցական ակտիվի անձնական փորձառության, նախապատվությունների հիման վրա և միշտ չէ, որ բխել է PR ոլորտին վերաբերող գիտելիքներից:

Հարցվածներից ոմանք, սակայն, անցել են PR-ին վերաբերող որոշ թրեյնինգներ:

### **6.3. Կուսակցությունների գենդերային PR քաղաքականությունը**

Կուսակցությունները հիմնականում չեն տանում հատուկ գենդերային ուղղվածություն ունեցող PR և տղամարդկանց կամ կանանց ներկայացնելու հարցում չունեն հստակ կոնցեպցիա:

*Ես չեմ ասի, որ կա այդպիսի հստակ PR, որովհետև եթե լիներ, շատ ավելի լավ իմիջ կձևավորվեր: Հստակ PR չկա (կին-գործիչ):*

Առհասարակ հարցված կուսակցություններում (և՛ կին-գործիչների, և՛ PR պատասխանատուների շրջանում) գերիշխում է այն համոզմունքը, որ լավագույն PR-ն այն է, ինչպիսին իրենց կուսակցության ամեն առանձին գործիչ ցանկանում է ներկայանալ՝ իր բնական էությամբ և ասելիքով՝ առանց արհեստական միջամտությունների:

Տվյալ կուսակցությունների PR խմբերը միջամտում են միայն հանրությանը երևացող գործիչներին որոշ խորհուրդներ տալով, որպեսզի այդ գործիչների հանրային ասելիքը լինի կուսակցական գաղափարների կամ տվյալ պահի պայմանավորվածությունների շրջանակներում և չհակասի ընդհանուր գծին:

Կուսակցությունների որևէ PR խումբ չի զբաղվում կուսակցության առանձին ներկայացուցիչների (բացառությամբ կուսակցության լիդերի) իմիջի ձևավորմամբ և

արտաքին տեսքի, խոսելաոճի և այլնի հետ կապված խորհրդատվություն նրանց սովորաբար չի տալիս:

Որոշ կուսակցությունների PR խմբեր **որոշակի միջամտություն են երբեմն կատարում միայն ԱԾ-ում ներկայացված պատգամավորների խմբի հարցում**, քանի որ վերջիններս են, որ հանրությանն առավել հաճախ են ներկայանում, և նրանցով է հանրությունը ձևավորում է իր կարծիքը տվյալ կուսակցության վերաբերյալ:

Այնուամենայնիվ նկատվում է նաև որոշ՝ ոչ հատուկ ծրագրված, սակայն կարևոր միտում՝ կին և տղամարդ-գործիչների հանրային կերպարներում շեշտելու հանրության համար նրանց առավել ընկալելի ու ընդունելի դարձնող գծերը՝ ելնելով հայ հասարակության մեծամասամբ ավանդական բնույթից:

### **«Օրինաց երկիր» կուսակցության PR-ը**

Այս կուսակցության ներկայացուցիչները նշում են, որ իրենց համար իրենց PR-ը նույնն է, ինչ կուսակցության կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը. այսինքն՝ «Օրինաց երկիր» կուսակցության PR-ը հենվում է կատարված աշխատանքների ներկայացման վրա:

*Մենք փորձում ենք գոնե լինել մաքսիմալ օբյեկտիվ, երբեք չխաբել ընտրողին (PR պատասխանատու):*

Տվյալ կուսակցության PR-ում կարևորվում է հատկապես երկու չափորոշիչ:

- PR-ը կազմակերպել հնարավորինս մատչելի՝ հասարակության բոլոր շերտերին հասկանալի լինելու համար:

*Մենք փորձում ենք PR-ը իրականացնել մաքսիմալ գրագետ, մաքսիմալ մատչելի ու հասարակության բոլոր շերտերի համար ընկալելի և ընդունելի տարբերակով (PR պատասխանատու):*

- PR-ին դիմել չափի մեջ, ոչ մեզ դոզաներով՝ հազեցման էֆեկտից խուսափելու, հասարակությանը «չզզվեցնելու» համար:

### **«Հայաստանի հանրապետական կուսակցության» PR-ը**

Տվյալ կուսակցության ներկայացուցչի հաղորդածի համաձայն՝ ՀՀԿ-ն նախկինում՝ ստեղծման պահին եղել է տղամարդկային կուսակցություն, որում կին-գործիչը, կին-անդամն ընկալելի և ընդունելի չի եղել: Ուստի կարելի է ասել, որ տվյալ կուսակցությունը ժամանակի ընթացքում **որոշակի փոխակերպման է ենթարկվել՝ ոչ միայն իր շարքերում ընդունելով կանանց, այլև նրանց ներակայացնելով պետական կառավարման տարբեր ոլորտներում:**



*Երբ ստեղծվել ա Հանրապետական կուսակցություն, տղամարդկանց կուսակցություն է եղել և բոլորը համարել են, որ կինը էնտեղ տեղ չունի: Հինա կուսակցականների կեսից ավելին կանայք են, և նաև ամենաշատը այսօր կին-պատգամավորները ընդգրկված են մեր կուսակցության խմբակցության մեջ: Այսինքն՝ այդ 14-ից 9-ը միայն եթե ոչ կուսակցության, ապա խմբակցության անդամներ են: Այդ առաջընթացը թերևս վկայում է, որ կանանց հանդեպ վերաբերմունքը կուսակցությունում փոխվել է (կին-գործիչ):*

Ինչ վերաբերում է կուսակցության բուն PR-ին, ապա նշվում է, որ կուսակցությունը PR, որպես այդպիսին, չունի: Հասարակության մեջ տվյալ կուսակցության մասին կարծիքը, ըստ հարցվողի, ձևավորվում է հանրության հետ հանդիպումների և այլ հրապարակային գործողությունների միջոցով, որոնցում իրենք աշխատում են հանրության տարբեր խմբերի հիմնախնդիրներին հնարավորինս տեղյակ ներկայանալ և առաջարկել դրանց լուծման կուսակցական տեսլականը:

Տվյալ կուսակցությունը նույնպես, ըստ հարցվողի, հիմնվում է այն տեսակետի վրա, որ կեղծիքի վրա կառուցված գովազդը երկար կյանքի չի կարող ունենալ, ուստի անհրաժեշտ է հաղորդակից լինել սոցիալական տարբեր խմբերի խնդիրներին և վստահություն ներշնչել սեփական գործունեության նկատմամբ:

*Մարդկանց պետք է, որ այդ խնդիրները լսող և լուծող լինի: Եվ մենք պետք է այդպես անենք, այդպես ներակայանանք. կարողանանք ոչ թե խաբել, այլ վստահություն ներշնչել (կին-գործիչ):*

### **«Ժառանգություն» կուսակցության PR-ը**

Այս կուսակցության ներկայացուցիչները և մասնավորապես PR պատասխանատուն նույնպես ելնում են այն համոզմունքից, որ իրականության կեղծման վրա հիմնված PR-ը արդյունավետ չէ և նաև ավելի ծախսատար է: Մինչդեռ զուտ իրականության ներկայացումը ոչ միայն լավագույն PR-ն է, այլև լավագույն արդյունքն է տալիս նվազագույն ծախսերի դիմաց:

*PR-ը եթե հիմքեր ունի, էֆեկտիվ ա ավելի: Եթե դու ճշմարտությունն ես ներկայացնում, դու դրա վրա կարող ես ծախսես մի դոլլար ու ստանաս նույն արդյունքը, ինչը երբ ինչ-որ մեկը դրան հակառակ սուտը ներկայացնում ա ու 100 դոլլար ա ծախսում դրա վրա... ու մեկ ա կարող ա էդ արդյունքը չստանա (PR պատասխանատու):*

Ժառանգության կուսակցության հարցվողները նշում են, որ կին և տղամարդ-գործիչներին ներկայացնելու իրենց հիմնական սկզբունքը նրանց գրագիտության, ֆունկցիոնալության, օգտակարության, բարոյական կերպարի ցուցադրումն է, որը **հակակշիռ պետք է ստեղծի իշխող կուսակցության ներկայացուցիչների հետ**

համեմատության մեջ, քանի որ վերջիններիս համարում են այդ որակների տրամագծորեն հակառակ որակների կրողներ:

Հարկ է շեշտել, որ Ժառանգությունը «ղեպի կինն» ամենամիտված կուսակցությունն է, որն իր նախընտրական քարոզարշավներում կուսակցության լիդերից հետո կին-թեկնածուներին առաջին պլան մղելը դիտարկում է հանրության կողմից առավել դրական ընկալվելու, ուստիս վարկանիշը բարձրացնելու որոշակի քայլ:

Նշվում է նաև, որ իրենց կուսակցության կին-գործիչներին ներկայացնելիս շեշտում են նրանց մայր լինելու, օրինակելի հայկական ընտանիք ունենալու հանգամանքները, *քանի որ ենթադրվում է որ հայ հասարակության ավանդական պատկերացումները կնոջ դերի մասին կին քաղաքական գործչին կարող են ընդունելի դարձնել միայն նրա կողմից կնոջը վերագրվող առաջնային գործառույթները պատշաճ կատարելու ապացույցն ունենալու դեպքում, իսկ այդպիսի առաջնային դերեր են ընտանիքի մայրը և կինը: Սրանք օրինակելի կերպով կատարած լինելը հավաստելը հանրության կողմից առավել լավ ընդունվելու կապիտալ է ծառայում կին-գործիչների համար:*

### «Հայ ազգային կոնգրես» կուսակցության PR-ը

Տվյալ կուսակցությունը նույնպես չի հավատում PR-ի ամենագործությանը և առաջնորդվում է այն սկզբունքով, որ հարկ է ներկայացնել այն, ինչ կա, քանի որ արհեստականորեն կերտվածը շատ արագ կարող է փլուզվել: Ուստի PR-ը ընդամենը սեփական արածների ներկայացումն ու լայն շրջանառությունն է հասարակության մեջ:

*Քաղաքականությունը շատ տեսանելի է, շատ բացահայտ: Եվ ինչքան մարդը վարպետորեն ծածկի իր անբարոյականությունը, միննույն է, ի վերջո անբարոյականությունը ի հայտ է գալու: Դրա համար լավ կլինի, որ բարոյական մարդիկ զբաղվեն քաղաքականությամբ՝ սուտ չխոսեն, չխաբեն, չգողանան, չենթարկվեն անազնիվ որոշումների: Որովհետև ի վերջո դրանք ջնջվում են քաղաքական պատմությունից, իսկ ովքեր բարոյական են, հասարակության շահերով են առաջնորդվել, նրանք են մնում պատմության մեջ՝ որպես քաղաքական գործիչ (կին-գործիչ):*

Այս կուսակցության հարցվողները նշում են նաև, որ ներկայանալիս փորձում են հակակշիռ ստեղծել իշխանական գործիչների կերպարներին և, անկախ գործչի սեռից, երևալ որպես «գրագետ», «բարեկիրթ», «քաղաքացի», «վճռական» և այլն, համարելով որ իշխանական գործիչներն այս ամենի հակառակի կրողներն են: Տվյալ որակներն այս կուսակցության հարցվողները համարում են իրենց տարբերակիչ նշանը մնացած և հատկապես իշխանական կուսակցությունների ներկայացուցիչներից:

*Օբյեկտիվորեն ըտենց ա ստացվել: Հայ ազգային կոնգրեսը ամենաինտելեկտուալ կուսակցությունն ա: Օրինակ մեր ավագանու ցուցակը ամենաշատ մագիստրոսներ և գիտությունների թեկնածուներ ներառող ցուցակն ա եղել, արտասահմանում կրթություն ստացած*

*մարդկանց ամենաշատը ներառող ցուցակն ա եղել: Էդ թվում նաև կանանց դեպքում: Եվ դա մենք շեշտադրում ենք: (PR պատասխանատու):*

Ինչ վերաբերում է կանանց և տղամարդկանց իմիջներին, ապա հարցվողները նշում են, որ **չունի հատուկ մշակված գենդերային քաղաքականություն և կանանց կամ տղամարդկանց ներկայացնելու հատուկ մոտեցում:**

*Տղամարդկանց ու կանանց ընտրելու կրիտերիա չունենք (PR պատասխանատու):*

### **«Բարգավաճ Հայաստան» կուսակցության PR-ը**

Այս կուսակցության ներկայացուցիչները համարում են, որ PR-ը բոլորովին չպետք է հենվի որևէ երևույթ կամ անձին լավագույնս ներկայացնելու վրա: Կրկին, մոտեցումն այն է, որ քաղաքական PR-ը պետք է կառուցվի իրական կերպարների վրա՝ **գլխավոր խնդիր համարելով հասարակության մեջ այդ ամենի լայն շրջանառումը:**

*Կտրուկ անհամաձայնություն եմ հայտնում նրանց, ովքեր գտնում են, որ պետք է, անհրաժեշտ է անհատներին լավագույնս ներկայացնել: Եթե մենք դիմակավորելու ենք, արհեստական ժպիտներ և բարություն ենք քաշելու մեր կերպարների վրա ու դրանով հանդես գանք հանրությանը, իսկ ընտրվելու պարագայում գործենք այլ կերպ, այլ նկրտումներով և զգացմունքներով, ապա կարծում եմ դրանից ոչ մի լավ բան դուրս չի գա: Ընդամենը մեկ բան է պետք. եղածը հնարավորինս լայն կերպով ներկայացնել (PR պատասխանատու)::*

Այս կուսակցության ներկայացուցիչները նույնպես նշում են, որ կանանց և տղամարդկանց կերպարների հարցում չունեն որևէ հատուկ դիրքորոշում, քանի որ **սեռական պատկանելությունն անկարևոր են համարում քաղաքական գործչի պարագայում:** Կարևոր են դիտում միայն գիտելիքները, կազմակերպչական հմտությունները, ղեկավար լինելու ունակությունները և այլն:

*Քաղաքական ու պետական գործունեության մեջ ինձ համար անձամբ կին ու տղամարդ տարբերություն գոյություն չունի և, շատ կներեք, դուր գա դա Ձեզ, թե դուր չգա, ես չեմ համարում, որ անհրաժեշտ է կանանց հատուկ դեր հատկացնել, ինչպես նաև տղամարդկանց: Մարդը, անկախ իր սեռական, կրոնական, չգիտեմ ռասայական, կուսակցական հատկանիշներից, պիտի ունենա գիտելիք, ինտելեկտ, մի շարք կազմակերպչական և այլն բնույթի հատկանիշներ, ձիրք ու բարոյականություն (PR պատասխանատու):*

### **«Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության PR-ը**

Այս կուսակցության դեպքում նկատվում է մի առանձնահատկություն, որը բնորոշ չէ մյուս կուսակցություններին: Բանն այն է, որ տվյալ կուսակցությունը, ունենալով երկար կենսագրություն, ուստիև հարուստ պատմական անցյալ, իր **PR-ի հիմքում դնում է իր անցյալի կուսակից անձանց կենսագրությունը, գործունեությունն ու անհատական հատկանիշները՝ որպես իմիջային հենք:**

Հաշվի առնելով նաև, որ ՀՅԴ-ն անցյալում ներգրավված է եղել հեղափոխական և պատերազմական գործընթացներում, և՛ տղամարդկանց, և՛ կանանց կերպարների հարցում ունի որոշակի ռազմական ուղղվածություն, այսինքն՝ փորձ է անում շրջանառել այնպիսի կերպարներ, ինչպիսիք են Սոսե մայրիկը, Ֆեդայի-կանայք և այլն:

Սակայն, այս կուսակցության ներկայացուցիչները շեշտում են նաև, որ **տվյալ կուսակցության անցյալում կին-գործիչների, հիմնականում մարտիկների առկայությունը, չի նպաստում կուսակցության մեջ գենդերային խտրականության թուլացմանը**, այլ հակառակը՝ տանում է նաև կանանց տղամարդացմանը, իսկ պարզապես կին-գործիչը, որը փորձում է իր դիրքը հաստատել և իր տեսակետները լսելի դարձնել, որոշակի դիմադրության է արժանանում:

*Իրան հոգեհարազատը Սոսե մայրիկն ա: Մենք երկու կոնստրուկտիվ ունենք՝ Մայր Հայաստան, Սոսե մայրիկ: Վերցնենք «Երկիր մեդիան» գաղտնիք չի, որ դա կուսակցական մեդիա ա, ինքը անընդհատ վերահաստատում ա էդ կոնստրուկտները: Շատ մասկուլին բան կա էդ ալիքում:  
Ես մի քանի անգամ գնացել եմ հաղորդումների, անգամ հաղորդավարը և կանայք պատրաստ չի դրան (կնոջը): Ասենք գովազդներում, էդ նախընտրական փուլում նկատում եմ, որ կանացի դեմքերը շատացել են, բայց դեռ շատ մասկուլինային ա (կին-գործիչ):*

Ինչ վերաբերում է այժմյան ՀՅԴ-ի գործունեության PR-ին, ապա տվյալ կուսակցության ներկայացուցիչները համարում են, որ **ՀՅԴ-ն իր ներկա գործունեության PR-ի հարցում հետ է մնում մյուս կուսակցություններից և առկա աշխատանքը, ձեռքբերումները, բարեփոխումները չի ներկայացնում լայն հանրությանը:**

### **«Սոցիալ-դեմոկրատական հնչյակյան կուսակցության» PR-ը**

Ինչպես մեթոդաբանական բաժնում նշվել է, այս կուսակցությունից PR պատասխանատու/մասնագետ հարցման չի ենթարկվել, քանի որ այդպիսին չի եղել: Տվյալ կուսակցությունը չի զբաղվում իր PR-ով և PR-ի նկատմամբ ունի մի դիրքորոշում, որի համաձայն՝ որևէ կուսակցություն առանձին PR-ի կարիք չունի, քանի որ, եթե այն հիմնվում է կեղծիքի վրա, ապա շատ արագ էլ հանգչում է, իսկ եթե հիմնվում է իրականության վրա, ապա այն «գովազդելու» կարիք չկա՝ հասարակությունը ամեն ինչ տեսնում է:

*Ես կարծում եմ, որ երբ կուսակցությունը ճիշտ դերում և տեղում է, էդտեղ նույնսիկ PR-ի կարիք չկա: Երբ կա դեկավար, որը միշտ փորձում է*

աշխատել և արդարացնել իր տեսակը քաղաքական դաշտում և ազնիվ պայքարի մեջ մտնել, էդպիսի կուսակցությունը PR-ի կարիք չունի, որովհետև մարդիկ նրան սկսում են ճանաչել՝ ըստ իր արածի: Ես չեմ կարծում, որ ինչ-որ արհեստական բաներով կարող ես հաջողել: Էն, ինչ-որ արհեստականորեն է ստեղծվում, դա վաղ թե ուշ նաև ձախողման հիմք է հանդիսանում, որովհետև քաղաքականության մեջ դու չես կարող իհարկե ամեն ինչ ասել, բայց էն, ինչ-որ ասում ես, նույնպես քոնը պիտի լինի, անկեղծ պիտի լինի:

### **Կանանց մասնակցությունը ընտրաքաղաքականությանը**

Բոլոր կուսակցությունները նշում են, որ կուսակցության կին-անդամներն ընտրաքաղաքականության մասնակցում են չափազանց ակտիվ, տղամարդկանց հավասար և **ներկայանում են բոլոր ֆորմատներում, որոնք կուսակցությունն օգտագործում է PR-ի համար:**

Կանայք մասնակցում են դեբատների, հյուրընկալվում հեռուստատեսությունում կամ ռադիոյում, տալիս են հարցազրույցներ մամուլին, ելույթ են ունենում ընտրողների հետ հանդիպումներում, այցելում են մարզեր, նկարահանվում են հոլովակներում, պատկերվում են պաստառներում և այլն:

*Շատ կարևոր և ակտիվ մասնակցություն են ունենում կանայք. բոլոր ռայոններում մեր կանայք եղել են, և, կարծես թե, բոլորն էլ ելույթ ունեցել են: Օրինակ ես տնտեսական մասով եմ միշտ ելույթ ունեցել: Հասարակությանը հետաքրքիր ա եղել էլ թվերը:*

*Շատ ակտիվ (դերակատարում են ունենում կանայք). և՛ քարոզչություն, և՛ բակային հանդիպումներ, և՛ դռնեղուռ քարոզչություն, և՛ հանրահավաքների ելույթներ... շատ ակտիվ, շատ անկաշկանդ...*

*Բոլոր տեղերում կանայք ներգրավված են եղել: Ամբողջ մարզերով շրջել ենք: Ես ինքս եղել եմ Վայոց Ձորի բոլոր գյուղերում, մյուս կին թեկնածուն եղել է Գեղարքունիքի բոլոր գյուղերում, մյուսը եղել է որևէ այլ մարզի բոլոր գյուղերում... Եթերում ենք եղել: Հանրահավաքի ժամանակ ելույթները եղել են և՛ տղամարդկանց, և՛ կանանց կողմից: Հանդիպումներում են եղել կանայք ներգրավված: Էնպես որ մենք նախընտրական փուլում տղամարդկանց հետ հավասար, ուս ուսի տված աշխատել ենք:*

Ըստ բոլոր հարցվողների՝ չկա որևէ ֆորմատ, որը կնոջ կամ տղամարդու համար ավելի գերադասելի համարեն՝ ելնելով նրա սեռից: Սովորաբար **այս կամ այն ֆորմատում երևալու սկզբունք են դիտում կոնկրետ անձի համապատասխանությունը տվյալ ֆորմատին.** օրինակ՝ ելնելով դեբատի թեմայից՝ ուղարկվում է դրան քաջածանոթ ներկայացուցիչը, հանրահավաքների դեպքում՝ ելույթ է տրվում խոսելու հմտություններ

ունեցողին, պաստառներում պատկերվում են (բացի առաջին դեմքերից) գրավիչ արտաքին ունեցողները (և՛ կանայք, և՛ տղամարդիկ) և այլն:

*Նայում են հարմարությանը. որ ժամին ով որտեղ է գրադված: Որովհետև տարբեր հեռուստաընկերություններ միաժամանակ կանչում են: Պետք էր համապատասխանեցնել և աշխատել այնպես, որ բոլոր հնարավորություններից օգտվեինք:*

*Նախընտրական փուլում կան որոշակի պատասխանատուներ. մամուլի պատասխանատուն որոշում էր, թե կոնկրետ որ հաղորդմանը ով է գնալու՝ կախված հաղորդման թեմայից, ուղղվածությունից:*

Բոլոր կուսակցություններում **կանայք նաև ներառվում են ընտրական բոլոր օղակներում**: Ընդ որում՝ հարցվածները նշում են, որ այդ դերում կանայք շատ ավելի վստահելի ու պատասխանատու են, քան տղամարդիկ:

*Կանայք պայքարել են ամեն ուղղությամբ, հանձնաժողովի անդամներ են եղել, վստահված անձինք են եղել... ամեն ինչ: Կանայք ավելի համառ են ու ավելի հետևողական: Եվ եթե մի գործ նրանց վստահում էս, նրանք մինչև վերջ տանում են: Էնպես որ էդտեղ նույնիսկ տղամարդիկ են ընդունում, որ կանայք շատ ավելի ազնիվ են:*

### **Հարցված կանանց քաղաքական ինքնաներկայացումը, իմիջքը**

Ինչպես արդեն վերը նշվեց, կուսակցության PR խմբերը առանձնակի **չեն գրադվում կուսակցության անդամների անհատական իմիջ-կերտմամբ**, ուստի հարցված կանայք ազատ են ներկայանալ այնպես, ինչպես իրենք են ցանկանում:

*Ես ինքս եմ կերտել իմ իմիջքը, ես համարում եմ, որ լուրջ աշխատանքի (PR-ի) դեպքում այդ իմիջքը շատ ավելի բարձր կլիներ:*

Այսինքն՝ կին-գործիչներն իրենցից կերտում են այն կերպարը, որով իրենք են ցանկանում երևալ հանրությանը:

Օրինակ՝

*Առաջնահերթ սկզբունքային... անկոտրում, հավատարիմ իմ նախընտրած քաղաքական ուժի նկատմամբ և, ի վերջո, որպես իմ հայրենիքի նվիրյալ զավակ:*

*Ես իմ կերպարով չեմ ուզեցել արագ ճանաչված դառնալ: Ես ուզեցել եմ, որ ինձ հարգեն, հասկանան, որ ես ականջալուր եմ բոլորի ասածին: Ես արել եմ ամեն ինչ, որպեսզի կարողանամ վստահություն ձեռք բերել և ոչ միայն վստահություն, այլ իմ քայրելով նպաստել եմ, որպեսզի որևէ ձևով իմ կուսակցությունը, իշխանական ուժը, որը այսօր կառավարում է երկիրը, որևէ ձևով դրական լիցքերով ներկայանա:*

*Մենք ինքներս ենք որոշում, ինչպես կհագնենք... Մենք չունենք Էդպիսի PR խումբ, որը կկերտի կին քաղաքական գործչի կերպարը: Չգիտեմ՝ դա ճիշտ է, թե սխալ, չգիտեմ՝ դա արդյունավետ կլինի, թե ոչ, բայց էս պահի դրությամբ մենք ինքներս ենք որոշում: Անկեղծ ասած՝ մինչ այժմ մեզանից յուրաքանչյուրը ինքն է կերտել իր իմիջը:*

Կին-գործիչները նշում են, որ սեփական կուսակցությունների կողմից երբևէ միջամտության, դիտողության կամ անհամաձայնության չեն արժանացել այս կամ այն կերպ երևալու, այս կամ այն կերպ խոսելու, հագնվելու և այլնի առնչությամբ: Այսինքն՝ **նրանց կողմից ընտրված ինքնաներկայացման կերպը իրենց կուսակցությունների կողմից երբևէ չի քննադատվել:**

*Երբևէ չեմ լսել դժգոհություն: Բազմաթիվ հարցազրույցներ եմ տվել այս տարիների ընթացքում, բազմաթիվ հարցերի շուրջ տեսակետներ եմ հայտնել, երբևէ դժգոհություն, քննադատություն իմ ընկերների (կուսակցական) կողմից չեմ լսել:*

45-ից բարձր տարիքի կին-գործիչների համար հասարակությանը ներկայանալու ցանկալի և առաջնային կերպարը **«կանացիությունն» է կամ «կանացի գործիչը»:** Այս կերպարով նրանք հիմնականում փորձում են **հակազդել «տղամարդացած կին-գործիչների» կերպարին և ապացուցել, որ քաղաքականությունը ոչ միշտ է «կոպտացնում» կնոջը,** հակառակը՝ կինը կարող է կանացի մնալ՝ լինելով քաղաքական ոլորտում:

Այս կերպարը նաև հետապնդում է մեկ այլ նպատակ՝ **չարժանանալ տղամարդ-գործիչների բացասական վերաբերմունքին,** քանի որ տվյալ հարցվողները վստահ են, որ վերջիններս տղամարդացած կանանց բացասաբար են վերաբերում: Ուստի եթե կին-գործիչները ցանկանում են տղամարդ-կոլեգաների կողմից արժանանալ դրական վերաբերմունքի և հաջողել սեփական ծրագրերում, պետք է պահպանեն «կանացիությունը»:

45-ից ցածր տարիքի կանանց դեպքում տվյալ հատկանիշը առաջնային բնույթ չի կրում:

Ընդդիմադիր կին-գործիչների շրջանում նկատվում է սեփական անձի ինքնաներկայացման նաև մեկ այլ կարևոր բաղկացուցիչ՝ **հակազդում իշխանական գործիչների ընդհանրական կերպարին:**

Որոշ կին-գործիչների սեփական կերպարում և առհասարակ կին քաղաքական գործչի մեջ կարևորում են նաև **հանդուրժողականությունը՝** համարելով սա այն ներդրումը, որը կարող է ունենալ կին-գործիչը քաղաքական դաշտում՝ ի հակադրություն տղամարդկանց:

Կին-գործիչների ինքնաներկայացման հիմնական ընդհանրությունն այն է, որ բոլորի մեջ գերակշռում է պատասխանատվության զգացումը սեփական սեռի նկատմամբ,

քանի որ նշվում է, որ կին-գործչի սխալները, սայթաքումները կանանց հիմնականում չեն ներվում և որակագրկում են ողջ կանացի սեռը:

### Ամփոփում

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ կին քաղաքական գործիչները բախվում են գենդերային խտրականության դրսևորումների իրենց գործունեության ամենատարբեր մակարդակներում, սակայն սեփական կուսակցություններում այդ երևույթի առկայության մասին խուսափում են խոսել:

Կուսակցություններում գենդերային քաղաքականության բացակայությունը և այն մոտեցումները, որոնք նշվում են որպես հիմնավորում դրա անհրաժեշտության բացակայության, վկայում են, որ նշված կուսակցությունները հիմնականում պատրաստ չեն կանանց առաջխաղացում ապահովելու և հնարավոր կամ առկա իշխանությունը նրանց հետ կիսելու:

Կուսակցություններում հիմնականում կանայք գերակշռում են շարքային անդամների շրջանում և ոչ այնքան բարձր դիրքերում: Խմբերի, հանձնաժողովների, վարչության և այլ ենթակառուցների ղեկավար դիրքերում գերակշռում են տղամարդիկ՝ կրկնելով հասարակության մոդելը, որում կանայք (հատկապես կրթված և այլն) տղամարդկանց հավասար կամ առաջատար դիրքերում են, սակայն զբաղեցնում են իշխանության ցածր օղակները, և որքան բարձրանում ենք իշխանական աստիճանակարգությամբ, այնքան տղամարդիկ դառնում են գերակշռող:



**Քաղաքական կուսակցություններում կանանց  
ներգրավման և հավասար հնարավորությունների  
ապահովման մեխանիզմ**

## Համառոտ ամփոփում

Հայաստանում կանանց քաղաքական սահմանափակ ներկայացվածությունը պայմանավորված է տարբեր սոցիալական, մշակութային և քաղաքական խոչընդոտներով: Խոչընդոտներից որոշ մասը քաղաքական կուսակցությունների վերահսկողությունից դուրս են, սակայն կուսակցությունները կարող են անմիջականորեն անդրադառնալ որոշ քաղաքական խնդիրների, իսկ գենդերային տեսանկյունից զգայուն քաղաքականության և օրինակների միջոցով նաև սոցիալական և մշակութային խնդիրներին:

Անհրաժեշտ է անդրադառնալ վերոնշյալ հիմնական խնդիրներին

**Սոցիալական:** Կանայք իրենց վրա են կրում ընտանիքի խնամքի պարտականություն, ներառյալ երեխաների դաստիարակությունը: Կանայք ավելի քիչ են ներկայացված աշխատանքային բարձր պաշտոններում, իսկ քաղաքականության ոլորտում հիմնականում հանդես են գալիս միջին պաշտոններում: Շատ կանայք ունեն քիչ ռեսուրսներ (ժամանակ, գումար, կապեր և այլն):

**Մշակութային:** Եվ տղամադրիկ, և կանայք ընկալում են քաղաքականությունը որպես տղամարդու զբաղմունք և կասկածի տակ են դնում են քաղաքական պատշոն զբաղեցնելու հարցում կնոջ ունակությունները: Կանայք հիմնականում զբաղեցնում են ենթակա և ավելի քիչ հեղինակություն վայելող պաշտոններ: Տղամարդիկ չեն սիրում հրամաններ ստանալ կանանցից, ովքեր ավելի բարձր պաշտոն են զբաղեցնում, քան իրենք: Կանայք պետք է գտնեն տղամարդկության և կանացիության ոսկե միջինը: Կանայք չեն կարող կայանալ քաղաքականության մեջ առանց իրենց ընտանիքների աջակցության:

**Քաղաքական:** Մշտական կոռուպցիան և ընտրաձայների վաճառքը ստեղծում են ֆինանսական խոչընդոտներ, որոնք հատկապես ոչ շահավետ են կանանց համար քանի որ նրանք հիմնական ավելի քիչ ռեսուրսներ ունեն: Կանայք հիմնականում ավելի շատ ներգրավվում են նախընտրական արշավի գործերում, քան քաղաքական գրասենյակի աշխատանքում: Կանայք հիմնականում հայտնվում են կուսակցության ցուցակների ամենաստորին մասում: Կանանց խրախուսում են հրաժարվել իրենց տեղերից և ընտրություններից հետո զիջել այդ տեղերը տղամարդկանց: Կուսակցության ցուցակների կազմումը փակ գործընթաց է, և ոչ բոլոր կուսակցությունները ունեն կանանց խորհուրդներ, իսկ եթե առկա են, նրանք հիմնականում աչքաթող են արվում: Կուսակցությունները չունեն շատ կանանց բարձր պաշտոններում:

Իրավիճակը բարելավելու համար կուսակցությունները կարող են անել հետևյալը՝

## Սոցիալական

- Կազմակերպել դասընթացներ կանանց համար՝ լրացնելու հմտությունների այն բացը, որը առաջացել է այն հանգամանքից, որ կանայք աշխատաշուկայում զբաղեցնում են տարբեր դեր:

- Կազմակերպել դասընթացներ տղամարդկանց համար՝ օգնելու նրանց հաղթահարել մշակութային նախապաշարմունքները կանանց նկատմամբ և ավելի լավ հասկանալու, թե ինչպես կարող են հասնել գենդերային հավասարության:
- Հետևել, որ քաղաքականության մշակման ցանկացած ոլորտում (ներառյալ գենդերային քաղաքականության) ներառված լինեն և կանայք, և տղամարդիկ:

### Մշակութային

- Հետևել, որ կանայք տեսանելիորեն ներկայացված լինեն կուսակցության PR մեխանիզմներում՝ կին քաղաքական գործիչների հանդեպ հանրության վերաբերմունքը փոխելու նպատակով:
- Կուսակցության ներսում ներքին պաշտոնների, ներառյալ ղեկավար պաշտոնների համար կիրառել քվոտային համակարգ: Քվոտաները պետք է օգտագործվեն կանանց ավելի բարձր պաշտոնների ուղղելու համար, ինչպես նաև կանխելու նրանց չափից շատ ներգրավվածությունը ամենօրյա առաջադրանքներում:

### Քաղաքական

- Բարձրացրել գենդերային քվոտաները յուրաքանչյուր ընտրությունից առաջ մինչև կանանց ներկայացվածությունը հասնի 50%--ի:
- Եթե կին ներկայացուցիչը հրաժարվում է իր տեղից ընտրությունից հետո, նա պետք է փոխարինվի ցուցակում ներգրավված մյուս կին թեկնածուով կամ տեղը պետք է մնա ազատ:
- Բոլոր տեղերը պետք է ընտրվեն կուսակցությունների ցուցակներով և ոչ մեծամասնական համակարգով:
- Թեկնածուների ընտրության ընթացակարգը դարձնել ավելի թափանցիկ:
- Կուսակցություններին պետության կողմից տրամադրել ֆինանսական ռեսուրսներ՝ հոգալու ընտրաբաշարի օրինական ծախսերը, որպեսզի թեկնածուները կարիք չունենան օգտագործելու իրենց սեփական գումարները՝ ընտրաբաշար ֆինանսավորելու համար:
- Պայքարել ընտրակաշառքի դեմ, որպեսզի տրամադրվող գումարները հոգան միայն ընտրաբաշարի օրինական ծախսերը:
- Հետևել, որ յուրաքանչյուր կուսակցություն ունենա կանանց խորհուրդ:
- Օգտագործել կանանց խորհուրդները՝ քաղաքականության մշակման բոլոր ոլորտներում գենդերային հավասարությունն ապահովելու համար:

### Մեխանիզմ

Կան բազմաթիվ եղանակներ, թե ինչպես քաղաքական կուսակցությունները կարող են փոփոխել իրենց վարքը և ներքին կառուցվածքը՝ կանանց ներկայացվածությունը մեծացնելու նպատակով: Այդ ամենին կարելի է հասնել հետևյալ կերպ՝

- Ներգրավել կանանց
- Ընտրել կանանց
- Վերապատրաստել կանանց և տղամարդկանց

- Ներառել քաղաքականության մեջ
- Առաջնորդություն և կազմակերպում
- Կառույցների վերափոխում
- PR

Կարևոր է նշել, որ կուսակցությունները կարող են բավականին շահել այս միջոցները ձեռ առնելու դեպքում: Կոռուպցիայի վերացումը կբարձրացնի հանրության վստահությունը քաղաքականության հանդեպ և կնպաստի Հայաստանում ժողովրդավարության երկարակեցությանը: Այն նաև կբարձրացնի Հայաստան երկրի վստահելիությունը և օրինավորությունը միջազգային հարթակներում: Քաղաքականության մեջ կանանց ներգրավվելուց հրաժարվելով՝ կուսակցությունը դառնում է հնաժամ, խտրական վերաբերմունք ունեցող և ոչ արդյունավետ: Ի հավելումն, կանայք ներկայացնում են Հայաստանում առկա տաղանդի գրեթե կեսը, որի վատնումը կնշանակի ունենալ խտրականություն տղամարդկանց նկատմամբ, ինչն էլ բերում է նրան, որ ընտվում են քաղաքական գործիչներ, որոնք միգուցե ամենալավ տարբերակները չեն: Կուսակցությունները կարող են մեծապես շահել ավելի շատ կանանց ներգրավելուց, ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործելուց՝ բարելավելով կնոջ կերպարը հայ ընտրագանգվածի շրջանում և ձեռք բերելով վստահելիություն միջազգային հարթակներում:

### **Կանանց ներգրավում**

- Հետևել, որ թեկնածու դառնալու հնարավորությունները ներկայացվեն կուսակցության բոլոր անդամներին էլեկտրոնային նամակների, տեղեկագրերի և անդամների շրջանում հաղորդակցության այլ ձևերի միջոցով, քան ուղղակի հիմնվելով խոսակցությունների վրա կամ թեկնածուներին անմիջապես առաջարկելով: Սա հնարավորություն կտա կանանց առաջադրվել, ովքեր այլ դեպքում չէին ընկալվի որպես թեկնածուներ:
- Կարևոր է նաև ուշադիր լինել ներուժ ունեցող թեկնածուներին, որպեսզի այդ կանայք ստանան անձնական խրախուսում և հաղթահարե՞ն հոգեբանական խոչընդոտներ, որոնք կարող են ետ պահել նրանց ինքնառաջադրվելուց:
- Նախապատվությունը տվեք այն կանանց, ովքեր երկար ժամանակ ներառված են կուսակցական գործերում, քան ընտրեք կանանց կուսակցությունից դուրս: Այսպիսով, խրախուսվում է կուսակցական աշխատանքը և մեծանում է կուսակցության ներսում տաղանդը պահպանելու և օգտագործելու հնարավորությունը:
- Եթե կուսակցության ներսում չկան ուժեղ կին թեկնածուներ, ապա մտածեք ընտրել կուսակցությունից դուրս՝ նրանց կուսակցություն բերելու համար: Սակայն եթե կուսակցության ներսում չկան կին թեկնածուներ, անհրաժեշտ է մտածել երկարաժամկետ ռազմավարության մասին, որի միջոցով հնարավոր կլինի կուսակցության ներսում պատրաստել կանանց կամ վերանայել, արդյոք կուսակցական կանանց ուժեղ կողմերը չեն թերագնահատվում:
- Եթե կուսակցությունը պետք է ներգրավի ավելի շատ կանանց անդամակցության և ղեկավար պաշտոնների համար, պետք է գտնել այնպիսի կանանց, որոնց

պրոֆեսիոնալ և կամավորական աշխատանքները հուշում են այն մասին, որ նա հարում է կուսակցության նպատակներին: Եթե կուսակցությունը ընտրության ընթացքում նշում է, որ կին քաղաքական գործիչներին ընկալում է լրջորեն, սա ավելի կշահագրգռի տաղանդավոր կանանց ներգրավելուն:

- Ստեղծել կանանց ներգրավման մարմին, որը կլինի անկախ թեկնածուների ընտրություն կատարող մարմին: Այդ կառույցի գործառույթը կկայանա նրանում, որ գտնի հնարավոր թեկնածուների և խրախուսի նրանց առաջադրվել:
- Հետևել, որ կուսակցական ժողովները անցկացվեն այն ժամերին, որոնք ավելի հարմար են կանանց համար, հատկապես երեխա խնամող կանանց և տրամադրել երեխայի խնամքի ծառայություն:
- Կանանց ներգրավելու գործընթացում օգտագործվող նյութերում օգտագործել կանանց նկարներ՝ ևս մեկ անգամ հաստատելու այն հաղորդագրությունը, որ կուսակցությունը ողջունում է կանանց:
- Կուսակցությունները պետք է ավելի շատ ղեկավարեն, քան հետևեն: Եթե կանայք քաղաքականությունում ավելի քիչ են ներկայացված, քան տղամարդիկ, քաղաքականությունում ավելի քիչ կանանց ունենալու համար լավ արդարացում չէ, այլ առիթ կուսակցությունների համար մոբիլիզացնել չօգտագործվող ռեսուրսները և խրախուսել ավելի շատ կանանց ակտիվորեն ներգրավելու:

### Կանանց ընտրություն

- Հաշվի առեք գենդերային հավասարության խնդիրները, երբ սահմանում եք այն չափանիշները, ըստ որի պետք է ընտրվեն թեկնածուները: Օրինակ՝ կարող են արդյոք կանայք ցույց տալ անհրաժեշտ հմտություններ և փորձ ոչ ավանդական միջոցներով, օրինակ՝ երեխայի խնամքի ցանցերը, մի քանի գործող միաժամանակ զբաղվելու ունակությունը, ավելի լայն լսարանի հետ հաղորդակցվելու ունակությունը, կազմակերպչական հմտություններ և այլն
- Բոլոր թեկնածուներին տրամադրել հստակ ուղեցույցներ, թե ինչպես պատրաստվել ընտրական արշավին:
- Կոչ անել պետությանը՝ ֆինանսավորել նախընտրական արշավի ծախսերը՝ վերացնելով ֆինանսական խոչընդոտները հնարավոր կին թեկնածուների համար:
- Նախընտրական ծախսերի վերաբերյալ կոչ անել սահմանել պետական վերահսկողություն՝ կոռուպցիա դեմ պայքարելու նպատակով և հետևել, որ գումարը ծախսվի միայն նախընտրական արշավի օրինական գործողությունների վրա:
- Հետևել, որ ընտրության գործընթացը լինի բաց և թափանցիկ:
- Խորհրդակցել բոլոր թեկնածուների հետ մինչև նրանց անունը ցուցակներում տեղադրելը՝ նրանց ցանկությունը ևս մեկ անգամ հաստատելու և ցուցակում նրանց դիրքը քննարկելու համար: Ներգրավել կուսակցության անդամներին թեկնածուների ընտրության գործընթացում այն կուսակցության ներսում հնարավորինս ժողովրդավարական ձևով անցկացնելու համար: Սա կարող է բերել նրան, որ կուսակցությունները կարող են մեծացնել իրենց անդամների քանակը, ինչպես նաև վերահսկել, որ ընտրված թեկնածուները ընտրվել են կուսակցության անդամների մեծամասնության կողմից:

- Եթե հնարավոր թեկնածուները անցնում են հարցազրույց կամ հրավիրված են մասնակցելու ընտրարշավին, համոզվեք, որ բոլոր թեկնածուները պատասխանում են նույն հարցերին:
- Հրաժարվեք այնպիսի հարցերից, որոնք ընգծում են թեկնածուի սեռը կամ անհարիր են, օրինակ՝ թեկնածուի ունակությունը համատեղել քաղաքականությունը ընտանեկան կյանքի հետ կամ մեկնաբանել թեկնածուի արտաքին տեսքը:
- Ընտրեք միայն այն թեկնածուներին, ովքեր նախատեսում են զբաղեցնել իրենց տեղերը ընտրվելու դեպքում: Սա կմեծացնի ընտրողների վստահությունը կուսակցության նկատմամբ, եթե նրանք գիտեն, որ արդյունքում կունանան այն թեկնածուներին, որոնց համար քվեարկել են:

### **Վերապատրաստման դասընթացներ կանանց և տղամարդկանց համար**

- Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ միայն կանանց համար՝ օգնելու նրանց զարգացնել իրենց հմտությունները և ձեռք բերել թեկնածու դառնալու համար անհրաժեշտ ինքնավստահությունը:
- Խրախուսել բոլոր անդամներին մասնակցել նմանատիպ միջոցառումներին:
- Ի հավելումն, այդ միջոցառումներին հրավիրել այն կանանց, ովքեր ընտրվել են ընտրական հանձնաժողովի կողմից, եղեք նախաձեռնող և խրախուսեք կանանց վերապատրաստվել: Մի սպասեք, որ նրանք կմոտենան:
- Համագործակցել ՀԿ-ների և վերապատրաստման դպրոցների հետ, ինչպիսիք են՝ Կանանց առաջնորդության դպրոցը: Այդ կապերը կարող են օգտագործվել երկկողմանի՝ վերապատրաստման հնարավորություններ առաջարկել կուսակցության անդամներին և կուսակցության գործունեության մեջ ներգրավել այլ անդամների, ովքեր արդեն անցել են վերապատրաստում և կարող են դրսևորել իրենց առաջնորդության հմտությունները:
- Համոզվել, որ դասընթացին մասնակցելու համար չկան այլ խոչընդոտներ՝ օրինակ՝ գումարը, ժամկետները և այլն: Դասընթացն կազմակերպեք օրվա տարբեր ժամերին, օրինակ աշխատանքային օրերը կարող են ավելի հարմար լինել խնամող կանանց համար, այնինչ՝ հանգստյան օրերը ավելի հարմար են աշխատող կանանց համար: Դասընթացի ժամանակ կանանց առաջարկեք երեխայի խնամքի կենտրոնների ծառայություններ:
- Ի հավելումն, կազմակերպել պարտադիր վերապատրաստման դասընթաց գենդերային հավասարության վերաբերյալ կուսակցության ղեկավար պաշտոններն զբաղեցնող, թեկնածուներին ընտրող մարդկանց, ընտրված պաշտոնյաների և կուսակցության աշխատակիցների համար՝ համոզվելու, որ նրանք քաջատեղյակ են գենդերային խնդիրներին և իրենց կամքից անկախ խտրականություն չեն դնում կանանց նկատմամբ: Նախնական վերապատրաստման դասընթացից հետո նմանատիպ դասընթաց պետք է կազմակերպել երեք տարին մեկ:
- Եթե կուսակցության ընտրական հանձնաժողովը ներառում է շարքային անդամներին, ում հնարավոր չէ պարտադրել անցնել այդ դասընթացը, դասընթաց անցած անդամներից մեկը (ցանկալի է տղամարդ՝ համոզվելու, որ տղամարդ անդամները լուրջ են մոտենում այդ հարցին) պետք է անդամներին

համառոտ ներկայացնի հավասարության խնդիրները ընտրական հանդիպման սկզբում՝ համոզվելու, որ նրան տեղյակ են խտրականության գաղտնի ձևերին և չեն կիրառում դրանք:

### **Քաղաքականության մշակման գործընթացում գենդերային հավասարության ներառում**

- Համոզվել, որ կուսակցությունը ունի կանանց խորհուրդ, որի դերը կայանում է նրանում, որ աջակցի կին անդամներին և ընտրված պաշտոնյաներին, վերանայի գենդերային հավասարության քաղաքականությունը կուսակցության ներսում և վերահսկի այլ քաղաքականությունների գենդերային ազդեցությունը:
- Համոզվել, որ կանայք ներգրավված են քաղաքականության մշակման գործընթացի առաջին իսկ փուլից: Ոչ մի քաղաքականություն չպետք է հաստատվի կանանց բացակայության ժամանակ:
- Ինչպես կանայք են ներառվում քաղաքականության մշակման յուրաքանչյուր ոլորտում ( և ոչ միայն «կանանց» խնդիրների հետ կապված քաղաքականության), այնպես էլ տղամարդիկ պետք է ներառվեն յուրաքանչյուր ոլորտում և որոշակի ոլորտներ չպետք է վստահվեն կանանց: Տղամարդիկ անմիջականորեն պետք է ներգրավված լինեն (կանանց հետ մեկտեղ) գենդերային քաղաքականության մշակման մեջ: Չպետք է ենթադրվի, որ միայն կանայք պետք է մտածեն գենդերային հավասարության մասին:
- Ստուգել յուրաքանչյուր քաղաքականությունը հավասարության և կանանց վրա այդ քաղաքականության ազդեցության տեսանկյունից:
- Կուսակցության համար մշակել հավասարության համընդհանուր նպատակներ և համապատասխանեցնել բոլոր ներքին և ընտրական քաղաքականությունները սույն նպատակների հետ:
- Կանանց խորհուրդները պետք է ծառայեն միջոց՝ կառուցելու կանանց կարողությունները կուսակցության ներսում և համոզվելու, որ գենդերային խնդիրները հաշվի են առնվում քաղաքականության մշակման ամբողջ գործընթացում: Խորհուրդները չպետք է լինեն առանձնացված և չպետք է կանանց հեռացնեն իշխանությունից: Նրանք չպետք է նաև օգտագործեն կանանց ռեսուրսները անշնորհակալ առաջադրանքների համար:
- Խրախուսել այն քաղաքականությունների մշակումը, որոնք օգնում են անդրադառնալ քաղաքականությունում կանանց ներգրավվածությանը խոչընդոտող սոցիալական արգելքներին: Օրինակ՝ քաղաքականությունները, որոնք խրախուսում են հոր դերը երեխայի խնամքի գործում, ինչպիսիք են՝ հայրերի համար նախատեսված երեխայի խնամքի արձակուրդը կամ հայրերի համար ազատ գրաֆիկով աշխատանքը, այսպիսով, նվազեցնելով կանանց անհավասարությունը տան գործերում և կանանց համար ավելի հեշտացնելու հանրային կյանքում նրանց ներգրավվածությունը: հայրերի համար նախատեսված երեխայի խնամքի արձակուրդի քաղաքականությունը ամենարդյունավետն է, երբ նրանք համապատասխանաբար վճարվում են և կիրառվում է օգտվիր կամ կորցրու սկզբունքը (օրինակ ռեսուրսները չեն փոխանցվում կանանց):
- Առաջնորդել օրինակի հիման վրա, եթե կուսակցությունում տղամարդիկ գենդերային հավասարությունը ընկալում են լրջորեն (օրինակ, իրենք են

ներգրավված երեխաների դաստիարակության գործում), սա օգնում է օրինականանցել գենդերային հավասարության մեսիջը:

- Խրախուսել պետության կողմից տրամադրվող երեխայի խնամքի ավելի լավ ծառայության մատուցումը, որի ժամերը կհամընկնեն աշխատանքային ժամերին, որպեսզի կանայք ազատվեն խնամքի պարտականությունից և հնարավորություն ունենա քաղաքականությամբ: Այստեղ պետք է նաև նշել տնտեսական ասպեկտը՝ երեխայի խնամքի ավելի լավ կենտրոնների առկայությունը թույլ է տալիս տնտեսությանը ամբողջովին օգտագործել կանանց տաղանդը, ինչն էլ բերում է երկրում տնտեսական զարգացման ավելի բարձր մակարդակի:

### Առաջնորդություն և կազմակերպում

- Կուսակցության ներքին հիերարխայում և ընտրված գրասենյակի բոլոր մակարդակներում կանանց համար սահմանել նվազագույն սահմանաչափ:
- Համոզվել, որ կանայք ներգրավված են որոշումների կայացման գործընթացի բոլոր փուլերում:
- Համոզվել, որ կանայք չեն զբաղեցնում հասարակությունում ընդունված կարծրատիպային պաշտոններ, այլ զբաղեցնում են իրական պաշտոններ:
- Եթե կուսակցության ղեկավարը տղամարդ է, տեղակալը պետք է լինի կին, կամ հակառակը:
- Ղեկավար պաշտոններում կատարեք փոփոխություններ (օրինակ՝ տնտեսական հարցերով զբաղվող պաշտոնյա կամ արտաքին գործերով զբաղվող պաշտոնյա) և համոզվեք, որ մի պաշտոնում տղամարդ է, մյուսում՝ կին
- Համոզվեք, որ անձնակազմում, օրինակ՝ քաղաքականության մշակման խորհրդատուների կազմում նույնպես առկա գենդերային հավասարակշռություն:

### Կառույցների վերափոխում

- Գենդերային քվոտաները պետք է բարձրացվեն յուրաքանչյուր ընտրությունից առաջ, մինչև հասնեն 50%-ի: Այս գնալով մեծացող մոտեցումը դանդաղ է, բայց ավելի իրատեսական, քան քվոտաների բարձրացումը մինագամից 50% -ի, քանի որ այն որոշակի ժամանակ է թողնում ընտրելու և վերապտրաստելու կին թեկնածուներին և փոխարինելու տղամարդկանց, ովքեր արդեն թոշակի են անցնում: 50%-անոց քվոտային համակարգը ընդգծում է կանանց հավասար ներդրումը Հայաստանի քաղաքականության և հասարակության մեջ:
- Վերափոխել ընտրական համակարգը՝ փոխարինելու մեծամասնական տեղերը համամասնական տեղերով: Ակադեմիական գրականությունը ցույց է տալիս, որ մեծամասնական ներկայացվածությունը ավելի շահավետ է կանանց համար: Չնայած քվոտային համակարգը այդքան էլ արդյունավետ չի եղել Հայաստանում, կանայք համեմատաբար ավելի լավ են ներկայացված եղել կուսակցությունների ցուցակներում, քան առանձին ընտրատեղամասերում: Խստացնել ցուցակներում կանանց բաշխվածությունը (կանոնները, որոնք կանոնակարգում են թե ինչ համարի տակ պետք է լինեն կանայք կուսակցությունների ցուցակներում): Ներկայումս կանայք պետք է ներկայացված լինեն ցուցակի յուրաքանչյուր վեցերորդը, տասնմեկերորդը տասնվեցերորդը և այլն և հիմնականում կուսակցություններն այդ տեղերն էլ հիմնականում



բաշխում են: Կուսակցությունների միտումը կանանց ներգրավել ամենացածր դիրքերում այլ երկրներում հաճախ հանդիպող միտում է և այն շտկելու միակ ձևը նվազագույն դիրքը փոքրացնելն է: Ցուցակում առաջին դիրքի բացառումը պետք է անմիջապես վերացնել և հինգից մեկի կանոնը փոխել չորսից մեկի հաջորդ ընտրություններում (4, 8, 12 etc), դրան հաջորդող ընտրություններում երեքից մեկի (3, 6, 9), և ավելի բարձր, եթե ապագայում քվոտան այդքան կբարձրանա:

- Կանանց պետք է խրախուսել չհրաժարվել ընտրություններից հետո և ընտրել միայն չհրաժարվելու պայմանով: Համոզվել, որ քվոտան արտացոլում է ընտրված կանանց տոկոսը, և ոչ թե կուսակցության ցուցակներում կանանց համամասնությունը, կնոջ կողմից հրաժարականի դեպքում տվյալ պաշտոնը պետք է զբաղեցնի ցուցակի հաջորդ կին թեկնածուն կամ պետք է մնա ազատ:
- Պետության կողմից տրվող քաղաքական կուսակցությունների ֆինանսական միջոցների մեծացումը կհոգա ընտրարշավի օրինական ծախսերը և կոչնչացնի կանանց համար ֆինանսական խոչընդոտները:

## **PR**

- Օգտագործեք կանանց նկատմամբ դրական վերաբերմունքը ընտրազանգվածի մոտ ժամանակակից, ներառական և հավասարակշռված իմիջ ստեղծելու համար:
- Կուսակցության գովազդներում, նյութերում և վեբկայքում և այլ նյութերում օգտագործել և կանանց, և տղամարդկանց նկարներ: Նաև համոզվեք, որ այդ նյութերում նշված մեջբերումները բերված են երկու սեռերի կողմից:
- Խրախուսեք կանանց համար նախընտրելի քաղաքականությունները որպես կին ընտրողներին գրավելու միջոց, ովքեր կազմում են ընտրազանգվածի կեսից ավելին:
- Խուսափեք հանրային հանդիպումների, լուսանկարահանումների և հեռարձակումների ժամանակ միայն տղամարդկանց ներկայացվածությունից:
- Հիշեք, որ եթե կանայք միայն սիմվոլիկ դեր են տանում, դա երևում է: Որքան կայացած են կանայք կուսակցությունում, այնքան ավելի հեշտ է ներկայացնել այդ կերպարը հանրությանը:
- Ընդհանրական մակարդակում հայ քաղաքականության եւ գենդերային հավասարության աճը կարող է օգտագործվել՝ խրախուսելու ավելի առողջ ժողովրդավարություն: Գենդերային տեսանկյունից ավելի հավասարակշռված հասարակությունը ավելի գրավիչ է միջազգային բիզնեսների համար, քանի որ այն ավելի լավ է օգտագործում երկրի ռեսուրսները և չի ստեղծում խոչընդոտներ կանանց համար միջազգային կորպորացիաներում:

## **Գնահատման մեխանիզմներ**

Որոշ հայկական կուսակցություններ ավելի մեծ առաջընթաց ունեն դեպի գենդերային հավասարությունը, քան մյուսները: Մյուս կուսակցությունները դեռևս «նախնական» փուլում են: Ստորև ներկայացված են առաջընթացի թիրախային պատկերը և չափանիշները համաձայն տարբեր կուսակցություններում գենդերային զարգացման ներկայիս աստիճանների:

## Մակարդակ 1 – նախնական

2014-15

- Թեկնածու դառնալու հնարավորության մասին տեղյակ են պահվում բոլոր անդամները:
- Կուսակցության նիստերը անցկացվում են ավելի հարմար ժամերի:
- Ընտրության գործընթացը բաց է և թափանցիկ:
- Մինչև ցուցակների մեջ հայտնվելը թեկնածուների հետ անցկացվում է քննարկում:
- Թեկնածուները ընտրվում են այն պայմանով որ նրանք կզբաղեցնեն իրենց տեղերը, եթե ընտրվեն:
- Չի խրախուսվում, որ կանայք հրաժարվեն իրենց մանդատներից:
- Համագործակցում են ՀԿ-ների և վերապատրաստման կենտրոնների հետ:
- Կուսակցության ներսում ստեղծվում է կանանց խորհուրդ:
- Կանանց ռեսուրսները չեն օգտագործվում միայն կամ հիմնականում տաժանակիր առաջադրանքների համար առանց պարզևատրման, ինչպիսին է օրինակ՝ ընտրարշավը:
- Կուսակցության նյութերում միայն տղամարդիկ չեն ներկայացված:

2016-17

- Առկա են պոտենցիալ կին թեկնածուներ, և նրանք խրախուսվում են առաջադրվել:
- Անկախ ընտրական հանձնաժողովը ընտրում է կին թեկնածուներին և խրախուսում առաջադրվել:
- Կուսակցության նիստերի ժամանակ կանանց առաջարկվում է երեխայի խնամքի ծառայություն:
- Ընտրության չափանիշները ընդգրկում են այնպիսի հատկանիշներ, որոնք նույն են տղամարդկանց և կանանց համար:
- Ընտրարշավի ծախսերը հոգալու համար դիմում են պետական ֆինանսավորման:
- Գումարը պետք է ծախսել միայն ընտրարշավի օրինական ծախսերի վրա, և այդ գումարը չպետք է տրամադրվի անհատ թեկնածուների կողմից:
- Անդամները ներգրավված են ընտրության ընթացակարգերում:
- Կանանց տրամադրվում են վերապատրաստման հնարավորություններ՝ իրենց հմտությունները զարգացնելու համար:
- Ղեկավար պաշտոնների տղամարդիկ վերապատրաստված են՝ օգնելու նրանց հաղթահարել նախապաշարմունքները:
- Կանանց խորհուրդը խրախուսում է գնեդերային հավասարության քաղաքականությունը և օգնում է զարգացնելու ապագա կին առաջնորդների:
- Կանայք ներգրավված են որոշումների կայացման բոլոր փուլերում:
- Գենդերային քվոտաները բարձրացել են մինչև 25%-ի:
- Կանայք հայտնվում են կուսակցության ցուցակի ավելի բարձր դիրքերում:
- Մանդատից հրաժարվող կին թեկնածուին պետք է փոխարինել մեկ այլ կին թեկնածուով:
- Չկան տղամարդկանց կողմից ղեկավարվող սցենարներ, քանի որ կանայք ներգրավված են բոլոր փուլերում:

## Մակարդակ 2 – պրոգրեսիվ

2014-15

- Թեկնածու դառնալու հնարավորության մասին տեղյակ են պահվում բոլոր անդամները:
- Առկա են պոտենցիալ կին թեկնածուներ, և նրանք խրախուսվում են առաջադրվել:
- Կուսակցության նիստերը անցկացվում են ավելի հարմար ժամերի և նիստերի ժամանակ կանանց առաջարկվում է երեխայի խնամքի ծառայություն
- Ընտրության չափանիշները ընդգրկում են այնպիսի հատկանիշներ, որոնք նույն են տղամարդկանց և կանանց համար:
- Ընտրարշավի ծախսերը հոգալու համար դիմում են պետական ֆինանսավորման:
- Գումարը պետք է ծախսել միայն ընտրարշավի օրինական ծախսերի վրա, և այդ գումարը չպետք է տրամադրվի անհատ թեկնածուների կողմից:
- Ընտրության գործընթացը բաց է և թափանցիկ:
- Անդամները ներգրավված են ընտրության ընթացակարգերում:
- Կանանց տրամադրվում են վերապատրաստման հնարավորություններ՝ իրենց հմտությունները զարգացնելու համար:
- Կանանց խորհուրդը ազդեցություն ունի քաղաքականության մշակման վրա:
- Կանայք ներգրավված են որոշումների կայացման բոլոր փուլերում:
- Գենդերային քվոտաները բարձրացել են մինչև 25%-ի:
- Վարվում է քաղաքականություն փոխարինելու մեծամասնական տեղերը համամասնական տեղերով:
- Կանայք կուսակցության ցուցակներում ավելի բարձր դիրքում են:
- Կանանց խրախուսվում է չհրաժարվել իրենց մանդատներից, հրաժարվելու դեպքում պետք է փոխարինվեն այլ կին թեկնածուով:
- Չկան տղամարդկանց կողմից դեկավարվող սցենարներ, քանի որ կանայք ներգրավված են բոլոր փուլերում:

2016-17

- Կանայք իրենց կարիերան զարգացնում են կուսակցության ներսում՝ դառնալով իրական թեկնածուներ:
- Անդամներ ներգրավելու համար նախատեսված նյութերում օգտագործվում են կանանց նկարներ:
- Բոլոր թեկնածուների համար անցկացվում են ազատ և անկողմնակալ հարցազրույցներ:
- Կուսակցության ներսում կանանց տրամադրվում են վերապատրաստման հնարավորություններ:
- Կուսակցության տղամարդ անդամներին տրամադրվում են վերապատրաստման հնարավորություններ՝ գենդերային կարծրատիպերը հաղթահարելու նպատակով:
- Կանանց ձայնը լսելի է քաղաքականության բոլոր ոլորտներում:
- Կուսակցությունը ունի գենդերային հավասարության համընդհանուր նպատակներ:

- Կուսակցությունն առաջարկում է այնպիսի քաղաքականություն, որը նպաստում է գենդերային հավասարությանը, այնպիսիք, ինչպիսիք՝ հայրական խնամքի արձակուրդը կամ երեխայի խնամքի տրամադրումը պետության կողմից:
- Կուսակցության ներսում կանանց համար կան նվազագույն թիրախներ:
- Գենդերային քվոտաները բարձրացել են մինչև 30%-ի:
- Կուսակցությունը վարում է այնպիսի քաղաքականություն, որ յուրաքանչյուր չորս թեկնածուներից առնվազն մեկը կին է:
- Կուսակցությունը գտնում է, որ բոլոր կուսակցությունների համար պետք է լինի պարտադիր՝ կին թեկնածուին փոխարինել մեկ այլ կին թեկնածուով:
- Գենդերային հավասարությանն ընդառաջ կատարված առաջընթացը արտացոլվում է PR նյութերում՝ կուսակցության համար լավ իմիջ ստանալու համար:
- Կանայք ներառված են կուսակցության բոլոր նյութերում որոնք օգտագործում են ընտրարշավի ժամանակ:

### Մակարդակ 3 – առաջադեմ

2014-15

- Կանայք իրենց կարիերան զարգացնում են կուսակցության ներսում՝ դառնալով իրական թեկնածուներ:
- Կանայք իրենց կարիերան զարգացնում են կուսակցության ներսում՝ դառնալով իրական թեկնածուներ:
- Ընտրարշավի ծախսերը հոգալու համար դիմում են պետական ֆինանսավորման:
- Բոլոր թեկնածուների համար անցկացվում են ազատ և անկողմնակալ հարցազրույցներ:
- Կուսակցության ներսում կանանց տրամադրվում են վերապատրաստման հնարավորություններ
- Բարձր պաշտոն զբաղեցնող մարդիկ պատրաստվում են կերպով պիտի անցնեն գենդերային հավասարության վերապատրաստման դասընթաց:
- Կուսակցության կանանց խորհուրդը պետք է ունենա կենտրոնական դեր:
- Կանանց ձայնը լսելի է քաղաքականության բոլոր ոլորտներում:
- Կուսակցությունը ունի գենդերային հավասարության համընդհանուր նպատակներ:
- Կուսակցությունը խրախուսում է այնպիսի քաղաքականություն, որը նպաստում է թեկնածուին հավասարությանը, օրինակ հայրական խնամքի արձակուրդը կամ պետության կողմից տրամադրվող երեխայի խնամքը:
- Իշխանական պաշտոնները պետք է լինեն հավասարապես բաշխված. մեկը տղամարդու համար, մյուսը՝ կնոջ:
- Գենդերային քվոտային համակարգը մեծացնել մինչև 40%-ի կուսակցության ներսում՝ կոչ անելով այդ քաղաքականությունը կիրառել բոլոր կուսակցությունների համար:
- Կուսակցությունը կոչ է անում փոխարինել բոլոր մեծամասնական տեղերը համամասնական տեղերով:
- Կուսակցությունը կոչ է անում յուրաքանչյուր երեք թեկնածուներից մեկը դարձնել կին թեկնածու:

- Կուսակցությունը կոչ է անում այլ կուսակցություններին մանդատից հրաժարվող կին թեկնածուներին փոխարինել այլ կին թեկնածուներով:
- Կուսակցության գործունեության մեջ առկա գենդերային հավասարության գործոնը կազմում է կուսակցության դրական իմիջի մի մասը:
- Կանանց նկարները և բառերը օգտագործվում են կուսակցության կողմից մշակվող բոլոր նյութերում:

2016-17

- Վերապատրաստման դասընթացները կազմակերպվում են օրվա տարբեր ժամերին, կանանց տրամադրվում են երեխային խնամքի ծառայություն և պետք է ոչնչացնել կանանց մասնակցությունը խոչընդոտող այլ գործոնները:
- Բարձր պաշտոններ զբաղեցնող կանանց համար առաջարկվում են հավելյալ գենդերային հավասարության վերաբերյալ վերապատրաստման դասընթացները:
- Գենդերային հավասարության վերաբերյալ դասընթաց անցած անդամները կուղղորդեն մյուս անդամներին և ընտրական հանձնաժողովին, թե ինչպես խոսուսվել գենդերային խտրականությունից:
- Գենդերային հավասարությունը հաշվի է առնվում քաղաքականության մշակման բոլոր փուլերում և բոլոր ոլորտներում:
- Տղամարդիկ նույնպես պատասխանատվություն են կրում գենդերային հավասարությանն առնչվող խնդիրների համար:
- Բոլոր քաղաքականությունները համապատասխանում են կուսակցության գենդերային հավասարության նպատակներին:
- Կուսակցությունը ղեկավարում է օրինակին համապատասխան: Կուսակցության ղեկավարները, անձնակազմը և ընտրված պաշտոնյաները գործում են գենդերային հավասարության սկզբունքներով
- Կուսակցության ղեկավարը և տեղակալը նույն սեռի չեն:
- Գենդերային քվոտաները բարձրացվել են 50%-ի կուսակցության ներսում և կոչ է արվում բոլոր կուսակցություններին կիրառել սույն քաղաքականությունը:
- Կուսակցության ցուցակները հավասարապես են բաշխված (հավասար կին և տղամասրդ թեկնածուներ ամբողջ ցուցակում), կոչ է արվում այն պարտադիր դարձնել բոլոր կուսակցությունների համար: